

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հի. ՏԱՐԻ, 2010, ԹԻԻ 8 (338) - VOL. XXIX N° 8 السنة التاسعة والعشرون - العدد الثامن

ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ 2010



Հ.Մ.Ը.Մ.Ի 101ՐԴ ՄԱՍՆԱԾԻՒԴԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԼԱԻՎԼԻ ՄԷՋ

27 Օգոստոս 2010ը բացառիկ երեկոյ մը եղաւ Գանատայի նորակազմ Լաւալի գաղութին համար:

Տարիներու սպասումէ ետք, այդ օր ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Լաւալի մասնաճիւղը, խանդավառ ու քաջալեր քոյրերու եւ եղբայրներու ներկայութեամբ:

Արդարեւ, հոն էին ու իրենց սրտի խօսքը արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Թօփուզեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Սիեր Գարագաշեան, Լաւալի «Սարգիս Ձէյթեան» կոմիտէի ներկայացուցիչ Չոհրապ Կոստանեան, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական թէ Շրջանային նախկին վարչութիւններու անդամներ:

Այս առիթով, յաջողութեան ու գործակցութեան լաւագոյն մաղթանքներով արտայայտուեցաւ Մոնթրէալի «Հ.Մ.Ը.Մ.-Կամբ» մասնաճիւղի վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յակոբ Կուտեան:

Նորակազմ վարչութեան միաձայն ընտրութենէն ետք, Լաւալի Ս. Գեորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Յրայր Ա. Քինյ. Նիկոլեան կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշի օրհնութիւնը: Եղբ. Արմէն Կէտիկեան Կեդրո-



նական Վարչութեան անունով դրօշը փոխանցեց նորընտիր վարչութեան եւ յայտարարեց Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի 101րդ մասնաճիւղին հիմնադրութիւնը, ապա՝ եղբ. Մոսիկ Թօփուզեան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կանոնագիրը:

Նորակազմ մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամներն են.- եղբ. Պետիկ Յայրապետեան, քոյր Սոնա Լախոյեան, եղբ. Վազգէն Կիրակոսեան, եղբ. Վիգէն Սարգիսեան եւ եղբ. Սեպուհ Գարայեան:

ՄԵԾՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՀՐԱՋ ՏՏԻՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԸ

Մեծն Մոնթրէալի մարզական ատենանին տարեկան մրցանակաբաշխութիւնը այս տարի իւրայատուկ եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին համար, որովհետեւ ան արժանի գնահատանքը ընծայեց միութենական վաստակաւոր եղբօր մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, մարմնակրթանքի աշխարհին երկարամեայ նուիրեալ եղբ. Հրաջ Տէր Սարգիսեանին:

Մարզական ատենանը եղբ. Տէր Սարգիսեանը գնահատեց իր 33 տարուան աշխատանքին համար, իբրեւ ուսուցիչ, խորհրդատու եւ մարզական վարժարաններու տնօրէն, ի խնդիր պատանիներու եւ երիտասարդներու դաստիարակութեան եւ Քեպէք նահանգի մարմնակրթանքի յառաջդիմութեան բերած իր նպաստին:

Պարգեւատրող մարզական կառույցին ատենապետը այս առիթով արտասանած իր խօսքին մէջ ներկայացուց եղբայր Հրաջ Տէր Սարգիսեանի շարք մը իրագործումները.-

- Հիմնադիր եւ առաջին ատենապետ Մեծն Մոնթրէալի դպրոցներու մարզական կառույցին:
 - Հիմնադիր եւ մտայղացող միջ-վարժարանային քրոս-քառնութիւնի ծրագրին, որ կը նկատուի Գանատայի տարածքին մարզական մեծագոյն հաւաքը՝ մօտ 18 հազար մասնակիցներով:
 - Կազմակերպիչ եւ համադրիչ դպրոցականներու մասնակցութեան՝ Մոնթրէալի 1976ի Ողիմպիական խաղերուն:
 - Ընդհանուր պատասխանատու շրջանային եւ նահանգային մարզախաղերու:
- Կառույցին ատենապետը նշեց նաեւ, որ եղբայր Տէր Սարգիսեան անցեալին պարգեւատրուած է մարզական զանազան ֆետերասիոններու կողմէ, իբրեւ տարուան վարչական պատասխանատու:





ԹԻԼԻՆ ՆԻԼԹ ԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Սարգսյան ամսաթիթ
 Հրատարակութիւն՝ Հ.Ս.Ը.Ս.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻԹ. ՏԱՐԻ, 2010, ԹԻԻ 8 (338)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ներսէս Արք. Բախտիկեան*,
 Գ. Թորոյեան, Ջաւէն Տերվիշեան,
 ԲաՖՖի Սիւլահեան, Շաղիկ Գեորգեան
 եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵ
 Պուրճ Համուտ, Ճիմիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.Ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ձղուած է 35000 Լ.Ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.Ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



3

Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Իրագործում 3
- Պատմութիւն 6
- Մեր տեսակցութիւնները 8
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 14



28

ԲԱԺԻՆՆԵՐ

- Ճանչնանք 10
- Միջազգային 12
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

«ՄԱՐԶԻԿ»-ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Արուսեակ Տէր Պետրոսեանի մահուան առիթով, Պերճ եւ Մակի Հալլաճեաններ 200 \$
- Եղբ. Ճորճ Տաքէսեան (Ամման) 300 \$
- Եղբ. Գրիգոր Մալէգեան (Գանատա) 50 գանատական \$
- Գեղամ Սարգիսեանի եւ Սալբի Ջատիկեանի մահուան առիթով, եղբ. Յովհաննէս Մարտոյեան (Սիտնի) 100 ամստրալական \$



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

(Դ.)

Այսօրուան երիտասարդ բր-
ժիշկները, երկրաչափները,
արհեստավորներն ու
առևտրականները շատ
աւելի ճարտար եւ բանի-
մաց են իրենց մասնագիտութեան մէջ՝
քան իրենց նախորդները: Շատ պարզ է
ասիկա, որովհետեւ այս յառաջդիմու-
թիւնը արդիւնք է թեքնիք գիտերու,
որոնց ծանօթ չէին հիւները: Սակայն,
թեքնիքի կատարելագործումը հոգեմը-
տաւոր զարգացումի չափանիշ չէ:

Իրապէս զարգացած եւ հոգեպէս
մշակուած երիտասարդը, իր մասնագի-
տութենէն եւ արհեստէն դուրս, տէր է
նաեւ ընդհանրական այլ գիտելիքներու
եւ հետաքրքրութիւններու, որոնք ազ-
գային դիմագիծ եւ ընկերային յատկու-
թիւններ կը շնորհեն անոր:

Այս հետաքրքրութիւններուն պա-
կասն է, որ կը տկարացնէ համաշխար-
հայնացած աշխարհի այսօրուան երի-
տասարդներուն նկարագիրը եւ կը սահ-
մանափակէ անոնց հոգեմտաւոր հարըս-
տութիւնը:

Կը բաւէ արագ աչք մը նետել այսօր-
ուան երիտասարդութեան վրայ, անմիջա-
պէս անդրադառնալու համար, թէ միութա-
պաշտ կեանքի ինչպիսի՜ վազքի մը վե-
րածուած է անոր առօրեան: Բոլորը կ'ու-
զեն շատ եւ շուտ հարստանալ: Գործա-
մոլութեան ախտը վարակած է շատերը:
Անսանձ մրցակցութեան դարն է, որ
կ'ապրինք: Արագութեան դարը: Կար
ժամանակ, երբ մեծը կ'ուտէր պզտիկը,
այսօր արագը կ'ուտէ դանդաղը: Համաշ-
խարհայնացումը ոչ ոքի կը խնայէ:

Բայց կայ աւելի մտահոգիչը:
Արհեստագիտական եւ էլեկտրոնիկ
աշխարհի նորութիւնները այսօրուան
երիտասարդութեան համար ստեղծած
են կեանքի այնպիսի պայմաններ, ուր
կամաւոր աշխատանքի, նուիրաբերու-
մի եւ մինչեւ իսկ նահատակութեան վսե-
մագոյն արժէքները սկսած են տժգու-

նիլ: Գիտութիւնը, համաշխարհայնա-
ցումի այս օրերուն, մահացու հարուած-
ներ կը հասցնէ մարդկային ընկերու-
թեան, երբ արարչագործութեան շունչը
կը հեռացնէ ծինային ճարտարագիտու-
թեամբ աշխարհ եկած նորածիններու
անկողինէն, սէրը կը սպաննէ սրտերէն,
ազատութիւնը կը թաղէ յարգանքի գե-
րեզմանին մէջ, գլխիվար կը շրջէ մարդ-
կային ամէն ըմբռնում ու հաւատք, որ
կը հիմնուի տեսլապաշտ աշխատանքի
եւ անձնուէր ճիգերու վրայ: Հետեւա-
բար, երիտասարդութեան մօտ հետզհե-
տէ լայն տարածում կը գտնէ անիմաստ
ու անհաւատ կեանքի որոշ մօտեցում
մը, որ մեծագոյն յաղթանակները կը
պարպէ իրենց էութենէն, որովհետեւ
վտանգաւոր կերպով խրամատը կը
լայնցնէ մարդկային յառաջդիմութեան
եւ մարդկային արդարութեան միջեւ:

Մարդկային յառաջդիմութիւնը պայ-
մանաւորուած է աշխատանքով, հաւա-
քական ինքնութեան պահպանումով եւ
զարգացումով: Այսօրուան երեւոյթները,
սակայն, կու տան հակառակին ապա-
ցոյցները:

Անգործութիւնը այսօր ամէնուրեք
հասած է վտանգաւոր չափերու: Մեծ ըն-
կերութիւններ, իրարու միաձուլուող
ճարտարարուեստի հսկաներ այլեւս
տեղ չունին համեստ խաւի բանուորնե-
րու: Պահանջուածը մասնագիտական
բարձր կարողութիւններու տէր ուժեր
են: Երկրագործութիւնը կը նահանջէ,
ճարտարարուեստը կը մեքենականա-
նայ, իսկ առևտուրը հետզհետէ մուտք
կը գործէ էլեկտրոնային համակարգ: Հե-
տեւա՞նք. անգործ ու անտէր կը դառնան
հազարաւոր երիտասարդներ, որոնք շու-
տով կը մատնուին յուսահատական կա-
ցութիւններու եւ կ'իյնան մոլութիւններու
կամ բռնարարքներու գիրկը:

Իսկ ի՞նչ խօսք սեփական թէ հաւա-
քական ինքնութեան պահպանման կա-
րելիութեան մասին...:



Խոտածածկ մինի ֆուտպոլի դաշտը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՐԶԱԲԱՆԸ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԷ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԱԶԸ



Մարզական խումբի մը յաջողութեան նախապայմաններէն մէկն է փորձի դաշտ ունենալը: Եթէ որեւէ խումբ չունի փորձի յարմար դաշտ, ան կ'ենթարկուի ձախողութիւններու եւ տեսակաւոր դժուարութիւններու: Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մարզական խումբերը, անցեալին թէւ չունեցան նման

դաշտեր, սակայն բազում դժուարութիւններ յաղթահարելով կարողացան արձանագրել գոհացուցիչ արդիւնքներ եւ մինչեւ իսկ կարգ մը մարզախաղերու պարագային ապահովեցին փայլուն արդիւնքներ եւ նուաճեցին ախոյեանութիւններ:

Այսօր, տարիներու երազ մը իրականացման ընթացքի մէջ է: Հ.Մ.Ը.Մ. ունի իր մարզաւանի հողաշերտը, որուն վրայ շինարարական աշխատանքները ընթացք առած են հանգրուանային կերպով: Այս առիթով, «Մարզիկ» հարցազրոյց մը

ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեանին հետ՝ մօտէն ծանօթանալու համար մարզաւանի ծրագրին եւ անոր շինարարական աշխատանքներուն: Հարցազրոյցը վարեց Բաֆֆի Սիլահեան:





Մարզալանին մուտքը:

Կրնա՞ք մեզի նախ ամփոփ տեղեկություն մը փոխանցել մարզալանի տարածութեան եւ ընդգրկած բաժիններուն մասին:

- Մարզալանին հողաչերտը, որ կը գտնուի Պուսթան Ալ-պաշայի շրջանին մէջ, Հայ Ծերանոցին դիմաց, Հ.Մ.Ը.Մ-ին



Սինի ֆութպոլի դաշտը շինութեան ընթացքին:

տրամադրուեցաւ Սուրիոյ մարզական Ֆետերասիոնին կողմէ: Հողաչերտին տարածութիւնը մօտաւորապէս 27 հազար քառ. մեթր է: Իբրեւ բաժիններ, ան պիտի ընդգրկէ ֆութպոլի, պասքեթպոլի, թենիսի մարզադաշտեր, առաւել՝ լողաւազան-ճաշարան, կառատուն, ժողովասենեակներ եւ փինկփոնկի ու ճատրակի սրահներ:

Ի՞նչ կարելի է ըսել ցարդ կատարուած շինարարական աշխատանքներուն մասին:

- Առաջին հանգրուանին կառուցուեցան մարզալանին սրահը եւ ժողովասենեակները, իսկ վերջերս, 55 x 35 քառ. մեթր տարածութեան վրայ կառուցուեցաւ մինի ֆութպոլի դաշտը ու տրամադրուեցաւ մարզական եւ սկաուտական խումբերուն, որոնք սկսան կատարել իրենց հերթական փորձերն ու գործունէութիւնները:

Իսկ իբրեւ յաջորդ հանգրուան, ո՞ր բաժինը պիտի կառուցուի:

- Մեր ծրագրին համաձայն, յաջորդ հանգրուանը պիտի ըլլայ լողաւազան-ճաշարանի շինութիւնը, որուն պիտի յաջորդեն մնացեալ բաժինները:

Իբրեւ նախահաշիւ որքա՞ն նկատի առնուած է մարզալանի շինարարութեան ծախսը: Արդեօք նուիրատուութիւններու ակնկալութիւններ ունի՞ք:

- Անհրաժեշտ իրականութիւն է, որ նմանօրինակ ծրագիրներ կ'ենթադրեն մեծագումար ծախսեր: Բնական երեւոյթ է, որ աշխատանք մը տարուի ապահովելու համար այդ գումարները, ըլլայ նուիրատուութեամբ կամ հասութեաբեր ձեռնարկներով: Հոս կ'ուզեմ յիշել, որ Սուրիոյ մարզական ֆետերասիոնը գումարով մը կ'օժանդակէ մեր շինարարական աշխատանքներուն, բայց գործընթացը արագացնելու համար պէտք է վստահինք մեր ուժերուն:

Յանձնախումբը ի՞նչ դժուարութիւններու կը հանդիպի:

- Հակառակ անոր որ հողաչերտը տրամադրուած էր Սուրիոյ մարզական ֆետերասիոնին կողմէ, բայց եւ այնպէս հողին օգտագործման ժամանակ, կարգ մը անձերու կողմէ հանդիպեցանք դատական հարցերու: Բարեբախտաբար, բոլոր հարցերը յանգեցան լուծումի: Ներկայիս մեր միակ դժուարութիւնը նիւթականի ապահովման հարցն է:

Հ.Մ.Ը.Մ-ը եւ հալէպահայութիւնը ե՞րբ պիտի վայելեն մարզալանը իր ամբողջացած վիճակով:

- Նման հսկայ ծրագրի մը իրականացումը կ'ենթադրէ երկար ժամանակ, մանաւանդ երբ տրամադրութեանդ տակ պատրաստ գումարներ չունիս: Մենք հանգրուան առ հանգրուան կ'աշխատինք իրականացնել



Մարզաւանին ներքնայարկի բաժինները:



Շինարարական աշխատանքները ընթացքի մէջ:

մարզաւանի բաժիններուն շինութիւնը, ըստ անհրաժեշտութեան, եւ լիայոյս ենք որ մօտ ապագային հալէպահայութիւնը կը վայելէ մարզաւանը իր ամբողջական վիճակով:

Նղբ- Բաֆֆի Ինչպէս կ'ուզէք եզրափակել ձեր խօսքը:

- Առաջին հերթին կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք ճիգ չինայեցին մարզաւանի սկզբնական հանգրուանի աշխատանքներուն իրականացման համար եւ իրենց բարոյական ու նիւթական օժանդակութիւններով նե-

ցուկ կանգնեցան շինարարական աշխատանքներուն: Նաեւ կ'ուզեմ շեշտել, որ մարզական խումբի մը յաջողութեան նախապայմաններէն մէկն է յարմար փորձի տեղեր ունենալը, եւ մեր բոլորին փափաքն է որ մարզաւանի շինարարութիւնը հասնի իր աւարտին եւ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր խումբերը տեսնենք Սուրիոյ ախոյեանութեան բարձրագոյն դիրքերուն վրայ: Վերջապէս, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել «Մարզիկ»ի խմբագրութեան, որ միշտ մօտէն հետեւած է մեր աշխատանքներուն եւ արդիւններուն:

*Made from one single slice
of natural Australian opal*

Classique[®]

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

*Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com*

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



օրակարգ ունենալով վեցամսեայ տեղեկատուութիւն, Հ.Մ.Ը.Մ-ի արտասահմանի կեանքէն տեղեկութիւն, լիկ-մաչի մասին լուսաբանութիւն եւ Ռուսմանիոյ կեդրոնէն ստացուած շրջաբերականի ընթերցում:

Ժողովը լիկ-մաչի մասնակցութեան համար կ'առաջարկէ հայկական բոլոր խումբերու լաւագոյն խաղացողներով կազմել խումբ մը, որպէսզի կարելի ըլլայ օտարներուն առջեւ հայուն անունը բարձրացնել: Առաջարկը կ'ընդունուի: Իսկ Ռուսմանիոյ կեդրոնէն ստացուած շրջաբերականին պատասխանելու համար լիազօրութիւն կը տրուի վարչութեան: Այս ժողովին, առանձին հաշ-ւեքննիչ մարմինի մը զեկուցումէն կը պարզուի, որ Հալէպի մասնաճիւղին հիմնումէն մինչեւ օրը (1925 Նոյ. 1 - 1927 Յունուար 25) անոր նիւթական գործառնութիւնը եղած է.- մուտք 19,657 դրուշ, ելք 20689 դրուշ: Բաց՝ 1032 դրուշ:

Մօտ տասնհինգ ամսուան անհուն զոհաբերութեամբ ձեռք բերուած է շուրջ 200 օսմ. ոսկի, իսկ հիւմա՞, նոյն զոհաբերութեան ոգիով գործը կը շարունակուի՝ բացը գոցելու, միութիւնը կանգուն պահելու... Կասկածէ դուրս էր այդ, որովհետեւ ոգեկան հարստութիւնը ներքին մղիչ այն ուժն էր, որ կը մղէր նոր սերունդը գունդ առ գունդ համախմբուելու Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին ներքեւ:

Եւ որպէսզի աւելի մօտէն կարելի ըլլար հետեւիլ հետզհետէ կազմուող ֆութպոլի խումբերու աշխատանքներուն, վարչութիւնը ծանրաբեռնուած զգալով ընդհանուր գործերով, կը կազմէ ֆութպոլի խումբերու յանձնախումբ՝ ենթակայ եւ պատասխանատու իրեն: Այս յանձնախումբը կը կազմուի խմբապետներէ եւ ծանօթ ֆութպոլիստներէ՝ Շաւարշ Պէքերեան, Փանոս Խաչքրդեան, Արամ Կրկրկեան, Բաբգէն Վահրամեան եւ Գրիգոր Մէշէֆէճեան: Այս նշանակումը, վարչութեան եւ ֆութպոլիստներուն խառն ժողովին, 4 Փետրուարին միաձայնութեամբ կը վաւերացուի:

Լիկ-մաչի մասնակցելու հրաւեր ստացող խումբերու ներկայացուցիչները, Փետրուար 2ին, Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին մէջ ժողովի կը նստին: Այս ժողովին կ'որոշուի, որ հայերը, բանակը եւ տեղացիները առանձին ճակատ կազմեն ու ընտրեն իրենց ներկայացուցիչները, իբրեւ անդամ լիկ-մաչի յանձնախումբին: Հայերու կողմէ կը մասնակցի Կարապետեան, տեղացիներուն՝ Յ. Սահակեան, բանակին՝ տեղակալ Տիւմոն: Խաղերը կը դասաւորուին հետեւեալ կերպով:

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Ի. ՄԱՍ

Ժողովը կը հրաւիրէ խումբերու խմբապետները, 20 Յունուարին: Հրաւեր ստացած խումբերն են.- Փրանսացիներ (գինտուրական խումբեր), Հալէպի Իւնիոն Սփորթիւ, Սուլթանիէ, Թէր Սէնթ (Շիպէյնի), Ուսումնասիրաց, Արարատ, Նուպարեան: Այս ժողովին Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ ներկայացուցիչ կ'ընտրուին Մասպանաճեան, Կարապետեան, Պէքերեան:

Հալէպի մասնաճիւղին 1927 տարեշրջանի անդամական առաջին ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 23 Յունուարին,

● Ա. խաղ-հայ ընդդէմ տեղացիի, 20 փետրուար 1927:

● Բ. խաղ- տեղացի ընդդէմ բանակի, 27 փետրուար, 1927:

● Գ. խաղ- հայ ընդդէմ բանակի, 3 Մարտ 1927:

Հայերու խումբին կազմը կը բաղկանայ հետեւեալներէն.-

Բերդապահ.- Ճան Մելիտոնեան (Ուսումնասիրաց):

Յետասպահ.- Շաւարշ Պէքերեան (Հ.Մ.-Ը.Մ.) եւ Անդրանիկ Գափլանեան (Հ.Մ.-Ը.Մ.):

Միջնապահներ.- Պետրոս Մելիտոնեան (Ուսումնասիրաց), Մկրտիչ Գափլանեան (Հ.Մ.-Ը.Մ.), Արիեան (Արարատ), Վաղինակ Ճենապեան (Հ.Մ.-Ը.Մ.), Սուրէն Պայընտրեան (Ուսումնասիրաց) եւ Փանոս Խաչքըզեան (Հ.Մ.-Ը.Մ.):

Յառաջապահներ.- Ճորճ Մխիրեան (Ուսումնասիրաց) եւ Գէորգ Տ. Մկրտիչեան (Արարատ):

Հայերը այս մրցումներուն կը պարտուին՝ հակառակ խումբի կազմին մէջ երկրորդ փոփոխութեան մը: Խաղերը կ'անցնին խանդով ու հետաքրքրութեամբ: Մարզասէր հասարակութեան եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի շարքերէն ներս բուռն խօսակցութեան նիւթ կը հայթայթէ մանաւանդ պարտութեան պարագան, ինչ որ ցոյց կու տայ մարզանքի հանդէպ արթնութիւն եւ շահագրգռութիւն: Այս երեւոյթը քաջալերական էր: Ան պիտի հանդիսանար միջի ուժը ապագայ փայլուն յաղթանակներու:

Ռումանիոյ Հ.Մ.-Ը.Մ.-ի կեդրոնական Վարչութիւնը Հայկազ զրկած շրջաբերականին մէջ կը փափաքէր որ՝

Ա. Միութեան տասնամեակին առթիւ ծրագրուած հրատարակութեան մը համար, Հայկազ նիւթապէս եւ բարոյապէս մասնակցէր:

Բ. Նոյն տասնամեակին առթիւ, Հայաստանի մէջ Հ.Մ.-Ը.Մ.-ի օժանդակութեամբ ստատիստ մը կառուցելու համար մասնաճիւղը կատարէր իրեն բաժին ինկած նիւթական պարտաւորութիւնը:

Հայկազի մասնաճիւղի վարչութիւնը ինքզինք անկարող զգալով նման առաջադրանքներու դրական օժանդակութիւն ընելու, որեւէ պատասխան տալէ առաջ, յարմար կը դատէ Պէյրութի մասնաճիւղին կարծիքը առնել:

Հայկազի համար հաճելի լուր ու փափաք էր այն նամակին բովանդակութիւնը, ըստ որուն՝ Պէյրութ կը փափաքէր Զատիկուան օրերուն Հայկազի մէջ ունենալ Ֆուտպոլի խումբերու հանդիպում: Վարչութիւնը նման ձեռնարկի մը կարելիութիւնները քննելէ ետք, «անկարելի գտաւ 35-40 սուրիական ոսկիի հայթայթումը՝ տոմսեր սպառելով եւ գանձը ի վիճակի չըլլալով նման ծախս մը հոգալու, որոշեց գրել Պէյրութին»:

Պէյրութ վճռած էր Հայկազ այցելել: Հայկազ կը փափաքէր:



Ծախսին առջեւ պէտք չէր կանգ առնել: Հայկազ կ'որոշէ «տպել տալ 300 տոմս 5 դրուշնոց եւ 350 տոմս 2 դրուշնոց» ու նուիրատուսի անուան տակ հրապարակ կը հանուին այս տոմս յայտագիրները: Հայկազի համար կային նաեւ բացառիկ ծախսեր. հիւրասիրութիւն, կայարանէն քաղաք՝ կառք, թէ - յասեղան, թերեւս մէկ երկու հոգիի պանդոկի վճարումներ:

Եթէ տոմսակները տեղաւորուէին հնարաւորութիւն կար ճերմակ երես դուրս գալ, հակառակ պարագային, վարչութիւնը կ'որոշէր «բացառիկ կամաւոր հանգանակութիւն» մը կատարել:

Պէյրութի խումբը Ապրիլ 16ին Հայկազ կը հասնի: Եղբայրական ջերմ ընդունելութենէ ետք, խաղերը կը սկսին յաջորդ օրերուն: Հետաքրքրութեան համար կը ներկայացնենք օրուան նիւթական հաշիւը. «հասոյթ գոյացաւ 3457 դրշ. -15.50 օսմանեան ոսկի-: Այս գումարէն Պէյրութի խումբի կարօտ ֆուտպոլիստներուն իբրեւ ճանապարհածախս եւ պանդոկի վարձք վճարուած է 2506 դրշ., որով գուտ հասոյթ՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի Հայկազի անտուկը կը մնայ 951 դրշ. (Ատենագրութեան տետրակ Բ. Գիստ 35րդ, 20 Ապրիլ 1927): Այսպէս, Հայկազ - Պէյրութ խումբերուն առաջին հանդիպումը իր բարոյական գերազանց նշանակութեամբ, եղաւ նաեւ նիւթական յաղթանակ մը, նկատի առնելով տեղական պայմանները, ձեռնարկին նորութիւնը:

Վարչութիւնը Մայիս 1, 1927ին, ընդհանուր անդամական ժողով գումարելէ ետք, վերակազմութեան կ'ենթարկէ ֆուտպոլի յանձնախումբը նոր անդամներով.- Զարեհ Պզտիկեան, Լեւոն Մուրատեան, Շաւարշ Պէքերեան, Լեւոն Պիլէմճեան, Անդրանիկ Աթթարեան, Արիստակէս Պարսումեան եւ Անդրանիկ Գափլանեան:

(Շար. 20)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՊԱՏԱԿԸ ՀԱՅՈՒԹԻՒՄԸ ՀԱՅ ՊԱՀԵԼ Է ԵՒ ՖՈՒԹՊՈՒԸ ԿԱՐԵՒՈՐ ՄԻՋՈՑ ՄԸՆ Է ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ



- Վալանսը Փարիզին 580 եւ Մարսէյին 220 քլմ. հեռաւորութեամբ քաղաք մըն է, որ կը գտնուի յիշեալ երկու քաղաքներուն միջեւ: Ան ունի շուրջ 80 հազար բնակչութիւն: Հայեր Վալանսի մէջ հաստատուած են վերջին 3-4 տասնամեակներուն: Վալանսի հայութեան թիւը այսօր կը գնահատուի շուրջ 12 հազար, սակայն այդ թիւին մեծ մասը կ'ապրի ազգային կեանքէ հեռու: Գաղութը ունի իր Մշակույթի Տունը եւ ռատիոկայանը («Ռատիօ Ա»), որ կը սփռէ 24 ժամ: Ռատիոկայանը կը պատկանի Հ.Յ.Դ.Գաղտնազերծեան եւ լայնօրէն կ'անդրադառնայ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտպոլի խումբի լուրերուն: Կը գործէ Հ.Յ.Դ. «Նոր Սերունդ»ը, որ բաւական աշխոյժ է: Վալանսի հայութեան մեծամասնութիւնը նախկին հալչպահայեր եւ պէյրութահայեր են:

Կրնա՞ք ամփոփ ձեռով ծանօթացնել Հ.Մ.Ը.Մ.Ի Վալանսի մասնաճիւղը:

- Հ.Մ.Ը.Մ.Ի Վալանսի մասնաճիւղը ունի 27 տարուան պատմութիւն: Մասնաճիւղը կը գործէ Վալանսի Հայ Մշակույթի Տան մէջ եւ առաւելաբար կը զբաղի ֆուտպոլով: Մասնաճիւղը ունի ֆուտպոլի երկու խումբեր, որոնց մաս կը կազմեն 47 մարզիկներ: Խումբերուն միջին տարիքը 23 է:

Իսկ այդ մարզիկները հա՞յ են թէ օտար:

- Բոլորն ալ հայ են եւ ասիկա մեր մասնաճիւղին իւրապատկութիւնն է: Տարեկան բազմաթիւ օտարներ կը դիմեն մեզի, բայց մենք մեր դռները միայն հայերու դիմաց կը բանանք: Խումբին երիտասարդ մարզիչն է ձմէլ Քրտօ, իսկ օգնականն է Այէն Մնացիկեան: Եղբայր Քրտօ հայ է: Նախապէս, իբրեւ մարզիկ, ան մաս կը կազմէր խումբին: Վկայեալ եւ նուիրեալ մարզիչ մըն է:

Ի՞նչ կրնաք ըսել Վալանսի հայ գաղութին մասին ընդհանրապէս:

Նման փոքր գաղութ մը ի՞նչպէս կրնայ պահել ֆուտպոլի խումբեր:

- Ֆրանսայի պարագան յատուկ է: Ֆրանսայի մէջ պետութիւնը մեծ դիւրութիւններ կու տայ մարզական խումբեր պահելու եւ երիտասարդութիւնը անոնց շուրջ համախմբելու համար: Նախ պէտք է ըսել, որ Ֆրանսայի մէջ բոլոր դաշտերը պետութեան կը պատկանին: Նոյնիսկ Փարիզի մէջ, որեւէ ակումբ անձնական դաշտ չունի, ներառեալ՝ Փարիզ Սէն Ժերմէնը: Քաղաքապետարանները ստեղծած են դաշտեր, ուր խումբեր, ակումբներ կ'երթան մարզուելու: Մեզի տրամադրուած է ձիղոտէ դաշտը, ուր շաբաթը երկու անգամ, երեկոները կը կատարենք մեր փորձերը: Սկզբունքով, մեզի պէտք է տրամադրուի Պուրկի դաշտը, սակայն քաղաքապետարանը այդ դաշտը կը նախընտրէ տալ տեղական խումբին, որ կը խաղայ մեզմէ երկու դասակարգ վար:

Քաղաքապետարանները ֆուտպոլի խումբերուն կը կատարեն նիւթական յատկացումներ: Ճիշդ է, մեր պարագային այդ յատկացումը մեծ չէ, որովհետեւ օտարներ չունինք մեր կազմին մէջ եւ ասիկա լաւ աչքով չի դիտուել տեղացիներու

կողմէ, բայց եւ այնպէս, ամէն օժանդակութիւն քաջալերական է: Անշուշտ, պէտք է մոռնալ մեր համակիրներուն քաջալերանքի բաժինը:

Վատահ, անոնք դաշտի մուտքի գումարներով կը թեթեցնեն նիւթական ձեր բեռը:

- Ո՛չ, մեր դասակարգի մրցումները կը կատարուին առանց մուտքի: Եկամուտի մեր աղբիւրները կը հանդիսանան տարեկան մեր օրացոյցը, մեր դաշտին վրայ գործող կրպակը եւ եւ տարեկան մեր երկու պարահանդէսները, որոնք շօշափելի գումար մը կ'ապահովեն մեզի: Տարեկան մեր ծախսը կը գնահատուի շուրջ 22 հազար եւրօ: Այս գումարը կը տրամադրուի Ֆետերասիոնի մեր արտօնագիրին, մարզիկներու ապահովագրութեան, իրաւարարներու վարձատրութեան, երթեւեկի եւ մեր հիւր խումբերու հիւրասիրութեան ծախսերուն:

Տարեկան այդ գումարէն որքա՞նը կը յատկացուի մարզիկներուն:

- Մեր մարզիկները որեւէ գումար չեն գանձեր: Մրցակից խումբերու մէջ վճարումներ կը կատարուին, սակայն մեր մօտ նման բան չկայ, որովհետեւ մենք կը հաւատանք Հ.Մ.Ը.Մ.ի ականդական արժէքներուն: Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար դպրոց է: Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը հայտնութիւնը հայ պահել է եւ Ֆուլթայոլը կարեւոր միջոց մըն է այդ նպատակին ճամբուն վրայ: Ֆուլթայոլը նպատակ է: Հայ պահելը դիւրին գործ չէ Եւրոպայի մէջ: Կացութիւնը Միջին Արեւելքի նման չէ: Եւրոպան ժողովուրդներու ուկիտանոս մըն է, ուր մնալու եւ դոյատեւելու համար հսկայական ճիգ պէտք է: Երեւակայեցէք, որ մարզիկ եկեղեցի երթալու կը դժուարանան, ուր մնաց ազուրկ: Երիտասարդութիւնը գրաւող շատ բաներ կան մեր շուրջ եւ Հ.Մ.Ը.Մ.ը վիթխարի աշխատանք կը կատարէ: Մեր կ'աշխատինք հոգուով-սրտով եւ կը յաջողինք, որովհետեւ սիրելով եւ սրտանց կ'աշխատինք:

Մեր մասնաճիւղը արդէն 27 տարուան կեանք ունի, այս կը նշանակէ թէ քանի մը սերունդ եկած ու անցած է անկէ: Ժամանակին, երբ ես նոր պսակուած էի, զաւակներս կու գային եւ Ֆուլթայոլ խաղալս կը դիտէին, հիմա իրենք մեծցած են եւ ես իրենց Ֆուլթայոլ խաղալը կը դիտեմ:

Կրնա՞ք ընդհանուր գաղափար մը տալ Ֆրանսական Ֆուլթայոլին մասին եւ ըսել, թէ Վալանսի խումբը ո՞ր կը գտնուի այսօր:

- Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի խումբը կը մրցի Տրոմ Արտէշ չրջանի բարձրագոյն



դասակարգին մէջ: Ֆրանսայի Ֆուլթայոլի ընտանիքը բաւական մեծ է: Առենք մեր պարագան: Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի խումբը 1983ին երբ կազմուեցաւ, սկսաւ խաղալ Տրոմ Արտէշի Յրդ դասակարգին մէջ: Յետոյ խումբը աստիճանաբար սկսաւ բարձրանալ դասակարգէ դասակարգ՝ Յրդ, 4րդ, 3րդ, 2րդ, առաջին, նախքան բարձրագոյն դասակարգ եւ բարձրագոյն դասակարգ: Այսինքն՝ չրջանային մակարդակի կան 8 դասակարգեր: Ապա, չրջանի ախոյեանը կը բարձրանայ լիկի մակարդակին, մեր պարագային՝ Լիոնի լիկի: Իսկ անկէ ետք միայն, լաւագոյնները հանդէս կու գան Ֆրանսայի բոլորին ծանօթ ախոյեանական դասակարգերուն մէջ: Այնպէս որ, մինչեւ հոն հասնիր բաւական դժուար եւ երկար աշխատանք է: Օրինակ մը տալու համար յայտնեմ, որ մենք անցեալ տարի կը խաղայինք նախքան բարձրագոյն դասակարգ բաժնին մէջ, ուր մրցակից ունէինք 11 խումբ: Անկէ առաջ, առաջին դասակարգին մէջ կային 88 խումբեր՝ 4 խմբակներու մէջ, եւ այսպէս, որքան աւելի ետեւ երթանք՝ այնքան խումբերու թիւը կը բազմանայ եւ դասակարգէ դասակարգ բարձրանալը կը դժուարանայ:

Ի՞նչ կրնաք ըսել այս տարուան ձեր արդիւնքներուն մասին:

- Մենք այս տարի հանդէս կու գանք բարձրագոյն դասակարգի մէջ: Մինչեւ այս հարցազրոյցին կատարուիլը մենք կատարած ենք երկու մրցում եւ երկուքն ալ աւարտած ենք հաւասարութեամբ: Անցեալ տարի մենք 16 կէտի տարբերութեամբ առաջին հանդիսացանք եւ բոլոր Ֆրանսան մեր մասին խօսեցաւ:





Հ.Ս.Ը.Մ.ի Վալանսի մասնաճյուղի վարչուիթիւնը:

Հաւանականութիւնը ունի՞ք այս տարի դասակարգ մը եւս բարձրանալու եւ լիկի մակարդակին անցնելու:

- Քիչ մը դժուար է լիկի մակարդակին անցնելու մասին մտածելը, որովհետեւ որքան բարձրանաս այնքան ծախսերդ կ'աւելնան: Հետզհետէ մրցակիցներդ կ'ըլլան հեռաւոր շրջաններու խումբեր, եւ եթէ միայն երթեւեկի ծախսերը նկատի ունենաք, կը նկատէք թէ որքան դժուարութիւններ կը ստեղծուին մեզի համար: Մի մոռնաք, որ Ֆրանսական օրէնքին համաձայն, մենք ունինք նաեւ երկրորդ խումբ մը,

որ կը խաղայ Տրոմ Արտէշի երկրորդ դասակարգին մէջ, այսինքն՝ մեզմէ երեք դասակարգ վար: Ամէն անգամ, որ մենք մրցում մը պիտի կատարենք, մեզի հետ կը մեկնի նաեւ մեր երկրորդ խումբը, որ նոյն օրը, նոյն դաշտին վրայ, աւելի կանուխ կը մրցի մեր մրցակիցին Բ. խումբին հետ:

Իսկ որո՞նք մաս կը կազմեն երկրորդ խումբին:

- Երկրորդ խումբին մաս կը կազմեն երիտասարդները: Ֆրանսայի մէջ, ֆութպոլի տարիքային բաժանումները հետեւեալ ձեւով են.- 6-8 տարեկաններ, 8-10 տարեկաններ, 10-13 տարեկաններ, 13-16 տարեկաններ եւ երէցներ՝ Բ. խումբ, Ա. խումբ: Մենք 16էն վար տարիքի տղաք չունինք: Մեր քով կու գան 16էն ետք: Քանի մը տարի կը խաղան Բ. խումբին մէջ, յետոյ կ'անցնին Ա. խումբ: Պէտք է ըսել, որ Ա. խումբի այն մարզիկները, որոնք ախոյեանական եօթը խաղէ նուազ խաղացած են կրնան Բ. խումբին հետ խաղալ, իսկ Բ. խումբի մարզիկները կրնան որեւէ առիթով Ա. խումբէն խաղալ, ինչ որ յաճախ կը պատահի, երբ Ա. խումբը զանազան պատճառներով բացականեր ունենայ:

Այլ ըսելիքներ ունի՞ք:

- Շնորհակալութիւն պիտի յայտնեմ «Մարզիկ»ին, որ յաճախ կ'անդրադառնայ մեր լուրերուն: Յուսամ շուտով նոր յաջողութիւններու լուրերը կը փոխանցենք ձեզի:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Arthus-Bertrand / Agf / Terre vue du Ciel. Licence 075 960031 - StudioVCEB 2005 1905

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆԸ



Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպության ժանօթանալ էտը (տեսնել «Մարզիկ»-ի թիվ 322ը [էջ 13-15] եւ 323ը [էջ 14-21]), Թեհրանէն ստացուած յատուկ թղթակցութեամբ մը կը ծանօթանանք Հ.Մ.Ս.Բ.Մ.ի քոյր միութիւններէն՝ Իրանի Հայ Մշակութային «Նայիրի» Միութեան:

1 981 թուականին Թեհրանի Ձէյթուն քաղաքամասում համայնքի կեանքով մտահոգ եւ յանձնառու մի խումբ ազգայինների մտայղացումով հիմքը դրուեց Հ. Մ. «Նայիրի» Միութեանը, այն յստակ գիտակցութեամբ ու խոր համոզումով, որ այդպիսով հիմքն է դրուում նոր սերունդների հայեցի դաստիարակութեան տեսակէտից կարեւոր եւ հիմնական հասարակական մի կառույցի, որի պակասը Ձէյթուն քաղաքամասում վաղուց ի վեր զգալի էր եւ գոյութիւնը՝ անհրաժեշտ:



«Նայիրի» միութիւնը ունի 4 միաւորներ.- Մարզական, Երէջներ, Արուեստից եւ Սկաուտական, որոնք իրենց հերթին մասնակից են դարձել միութեան բոլոր աշխատանքներին եւ նրանց միջոցով տօնուէլ է համարեայ բոլոր ազգային-կրօնական տօները:

Միութեան նպատակը հիմնականում կրտսեր, պատանի, ինչու չէ՞ նաեւ երիտասարդ հասակի անհատներին ներգրաւել եւ հայկական միջավայրում մարզական հնարաւորութիւններ տրամադրելն է եղել:

Միութեան հիմնադրումից մէկ տարի անց հիմքը դրուեց միութեան սկաուտական բաժանմունքին, խմբապետ Արլէն Դաւթեանի պատասխանատուութեամբ, որին ապագայում փոխարինեցին խմբապետներ Էտիկ Շահպազեանը, Արմոնտ Ղարախանեանը, Ալֆրէտ Քէչիչեանը, Բաֆֆիկ Արզումանեանը եւ Անտրէ Յով-

կերպում են ըստ սկաուտական սկզբունքների: Հատուածները ունեն իրենց տարեկան արշաւներն ու բանակումները, նաեւ մասնակցում են համայնքին ազգային բոլոր աշխատանքներին:

սէփեանը, որոնք խմբապետական կազմերի օժանդակութեամբ լծուեցին սերունդների դաստիարակութեան գործին եւ մինչ օրս նոյն եռանդով շարունակում են իրենց աշխատանքը:

Ներկայիս միութեան սկաուտական բաժանմունքը ունի շուրջ 90 սկաուտներ, որոնք բաժանուած են՝ գայլիկ-արծուիկ, արի-արենոյշ, երէց-երիցուհի հատուածների, որոնք իրենց աշխատանքները ձեւա-





«ԵՌՒՐՕ ԼԻԿ»Ը ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

1 955ին կը սկսէր Եւրոպայի միջ-քաղաքային ախոյեանութիւնը, որ ձեւով մը կը նկատուէր միախառնական մրցաշարք: Այս մրցաշարքին կը մասնակցէին իրենց երկրի ախոյեանութեան ձախողած եւ երկրորդ դիրքէն մինչեւ հինգերորդ դիրքը զբաւած ակումբները: Նկատի ունենալով մասնակից խումբերուն մակարդակը, բնականաբար, մրցաշարքը կը նկատուէր բաւական բարձր մակարդակի: Փաստօրէն, բացի ախոյեաններէն, երկիրներու լաւագոյն ակումբները ներկայ կ'ըլլային այս մրցաշարքին:

Այս մրցաշարքը տեւեց մինչեւ 1970-1971 եւ վերանվանուեցաւ Եու.էֆ.Ա.ի բաժակ, իսկ անցեալ տարեշրջանին ան դարձեալ իր անունը փոխեց եւ այժմ կը կոչուի «Եուրօ Լիկ»:

Այս մրցաշարքը տարբեր անուններ կրելով հանդերձ մնացած է «Զեմփիրնոյ Լիկ»ի շուրջն տակ: Թէեւ անոր մասնակիցները եւ ախոյեանները նոյնքան հզօր են կամ նոյն ակումբներն են՝ ինչ որ են «Զեմփիրնոյ Լիկ»ի բաժակակիրները, սակայն իբրեւ մրցաշարք ան իր շուրջ մեծ

հետաքրքրութիւն չէ ստեղծած:

Սովորաբար, այս մրցաշարքին կը մասնակցէին 64 խումբեր: Աւարտականները տեղի կ'ունենային երթ ու դարձի դրութեամբ: Հետագային, 1999ին, Եու.էֆ.Ա.ն որոշեց աւարտական մրցումները կատարել մէկ մրցումով, նախապէս ճշդուած դաշտի վրայ:

Մրցաշարքին առաջին ախոյեանը կը հանդիսանայ Պարսելոնան, որ նաեւ առաւելագոյն տիտղոսներ խլող կազմն է: Աւարտականին կը մրցի Լոնտոն 6ի դէմ եւ երկու մրցումներէն յաղթական դուրս կու գայ 8-2 արդիւնքով: Այս առաջին մրցաշարքը, որ ձեւով մը վերջ կը գտնէ եօթանասուականներու սկիզբը, կ'ունենայ ինը տիտղոսակիրներ՝ Պարսելոնա երեք անգամ, Լիծ Եունայթըտ 2, Վալենսիա 2, Տինամօ Զադրէպ, Ֆերենցվարտ, Ռէյալ Սարակոսս, Արսենալ, Նիւքէսըլ եւ Ա. Էս. Ռոմա: Ուշագրաւ է, որ



մրցաշարքը անցած է անգլիական եւ սպանական ակումբներու տիրապետութեամբ: Այս մրցաշարքին լաւագոյն կողմը ընդհանրապէս իր անունը կը կրէ Ուալտօ (Վալենսիա) 31 կողով: Այս առաջին մրցաշարքը չի նկատուիր Եու.էֆ.Ա.ի պաշտօնական մրցաշարքը եւ, հետեւաբար, Եու.էֆ.Ա.ն անոր մրցանիշները նկատի չունենար յաջորդ մրցաշարքերու ընթացքին:

1971-1972ին սկսող Եու.էֆ.Ա.ի մրցաշարքը առաջին տասնամեակին կ'անցնի գերմանական եւ անգլիական

ակումբներու տիրապետութեան տակ: Երբեմն կարգ մը ակումբներ կը յաջողին «փախցնել» բաժակը եւ տանիլ այլ երկրներ: 1989-1999 տասնամեակին իտալացիք կը խլեն ութը բաժակ: Այս մրցանիշային թիւ է: Սակայն, 1999էն ետք իտալական որեւէ ակումբ ոչ միայն տիտղոսակիր չէ դարձած, այլ չե՛ւ՝ աւարտականի չէ հասած:

Այս մրցաշարքին առաւելագոյն թիւով մրցանակակիրները եղած են յաջորդաբար իտալացիք 9 անգամ, գերմանացիք՝ 6, անգլիացիք՝ 6 եւ սպանացիք 6: Առաւելագոյն անգամ աւարտականի հասած եւ պարտուած խումբերը եղած են գերմանական խումբերը՝ 8 անգամ, ապա՝ իտալական՝ 6 եւ սպանական՝ 5:

Յարդ, Թոթենհամ, Կալաթասարայ, Այաքս, Կոթլոպորկ (երկու անգամ), Պ. Մուլընկլատպախ եւ Ֆէյէնուերտ ախոյեան հանդիսացած են առանց պարտուելու: Մինչ Էսփանիոլ կը մնայ միակ կազմը, որ աւարտականին փենթիներով տեղի տուած ըլլալով, մնացած է անպարտելի:

Մրցաշարքի մեծագոյն արդիւնքով յաղթանակը արձանագրած է Այաքս (1984ին)՝ Ռէյտ Պոյզի դէմ, 14-0 արդիւնքով: Իսկ երթ ու դարձի դրութեամբ մեծագոյն արդիւնքը արձանագրուած է Ֆէյէնուերտ-Ռիւմելանտ (երթ՝ 9-0, դարձ՝ 12-0) մրցումին:

Երեք խումբեր յաջողած են երեք անգամ տիրանալ տիտղոսին. Եուվենթուս, Լիվրփուլ եւ Ինթէր Միլան:

Առաւելագոյն յաջորդական մասնակցութիւն բերող խումբերը եղած են Քլապ Պրիւս (14 անգամ) եւ Փառք Սալոնիկ (9 անգամ):

Երկու խումբեր՝ Ռէյալ Մատրիտ եւ Սելիլլա, յաջորդաբար երկու անգամ տիրացած են տիտղոսին:

1979-1980 տարեշրջանին գերմանական չորս խումբեր՝ Պ. Միլնիխ, Պ. Մուլընկլատպախ, Այնթրախթ Ֆրանքֆորթ եւ Շթուլթկարթ կը հասնին կիսաւարտականին:

Իտալական խումբեր յաջողած են երկու անգամ յաջորդաբար երեք տարի բաժակը տանիլ Իտալիա (1989, 1990, 1991 եւ 1993, 1994, 1995):

Մրցաշարքի կողմորդն է շուէտացի Հենրիք Լարսըն, որ

40 կոլ նշանակած է 56 մրցումներու ընթացքին: Անոր կը յաջորդեն Տիէթրը Միւլլըր (29) եւ Շոթա Արվեյածէ (27) կոլով:

Առաւելագոյն մրցումներու մասնակցած մարզիկն է իտալացի Ճիւզեփէ Պերկոմի (96 մրցում):

Շախթիոր Տոնէցք կը հանդիսանայ Եու.է.Ֆ.Ա.ի վերջին տիտղոսակիրը, աւարտականին պարտութեան մատնելով Վերտրը Պրեմըն (2-1) արդիւնքով:

Իսկ «Եուրօ Լիկ»ը, որ սկսաւ անցեալ տարեշրջանին, արդէն ունի իր առաջին ախոյեանը: Աթլետիքօ Մատրիտ աւարտական մրցումին պարտութեան մատնելով մրցաշարքի անակնկալ կազմը՝ անգլիական Ֆուլհէմը, 2-1 արդիւնքով տիրացաւ «Եուրօ Լիկ»ի առաջին բաժակին:

2010-2011 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

Ներկայիս մրցաշարքի առաջին հանգրուանը կը կատարուի խմբակային դրութեամբ: 48 խումբեր բաժնուած են 12 խմբակներու: Առաջին երկու մրցումները արդէն իսկ կատարուած են եւ կարգ մը խմբակներու մէջ կը սպասուի բուռն «պայքար»: Առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պիտի անցնին երկրորդ հանգրուան, ուր անոնց պիտի միանան «Զեմփրնդ Լիկ»ի մրցաշարքի խմբակային խաղերու երրորդ դիրքերը գրաւող ութը խումբերը: Կարգ մը խումբեր արդէն իսկ մատնուած են դժուար կացութեան, մինչ ուրիշներ աւելի ապահով կը թուին ըլլալ: Այսպէս, անցեալ տարուան ախոյեան Աթլետիքօ Մատրիտ, Եուվենթուս, Անտուրլէխթ, Պ. Տորթմունտ, Տինամօ Քիւել, Վիլլառէալ եւ Լիլ, որոնք իրենց երկիրներու ախոյեանութիւններուն լաւ արդիւնքներ կ'արձանագրեն, կրնան անակնկալներու առջեւ գտնուիլ եւ կանուխ հրաժեշտ տալ մրցաշարքին: Մինչ Պ. Լեւերքուզըն, Սփորթինկ Լիգպոն, Փառք, Մոսկուայի Բանակայիններ, Շթուլթկարթ, Փարիզ Սէն Ժերմէն, Փորթօ եւ Ջենիթ Փեթերսպուրկ աւելի հանգիստ են եւ կրնան իրենց յաջորդ մրցումները կատարել աւելի հանդարտ մթնոլորտի մէջ:

«Եուրօ Լիկ»ի այս տարեշրջանի աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Տապլինի (Հիւսիսային Իրլանտա) Աւիվա դաշտին վրայ, 18 Մայիս 2011ին:

Հակառակ մեծ ակումբներու ներկայութեան (Եուվենթուս, Լիվրփուլ, Փորթօ, Փարիզ Սէն Ժերմէն, Պ. Տորթմունտ եւ այլն), մրցաշարքը տակաւին իր շուրջ անհրաժեշտ հետաքրքրութիւնը չէ ստեղծած: Եու.է.Ֆ.Ա.ն խմբակային դրութեան որդեգրումով կը նպատակադրէր մրցաշարքը աւելի «համով-հոտով» դարձնել: Անշուշտ, նիւթական ակնկալութիւններն ալ այդ պարագային աւելի կը մեծնան, սակայն «Զեմփրնդ Լիկ»ը ամէն իմաստով կը մնայ տիրապետող:





Հ.Ա.Ը.Ա.Ի ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ 40ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

**Նուպար Տնփրճեան
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈ**

Նախաձեռնութեամբ Հ.Ա.Ը.Ա.Ի Սան Ֆրանսիսքոյի եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Ռոսստոմ» Ուխտին, Հ.Ա.Ը.Ա.Ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի հիմնադրութեան 40ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8էն սկսեալ, «Խաչատուրեան» Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, ներկայութեամբ 300է աւելի Հ.Ա.Ը.Ա.ականներու եւ համակիրներու: Հանդիսութեան ներկայ էին հիւրաբար քաղաքը գտնուող Խորէն Ա. Քհնյ. Հապէչեան, Հ.Ա.Ը.Ա.Ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Ա.Ը.Ա.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան, վարչականներ՝ Բաֆֆի Խաչատուրեան, Անօ Մանսուրեան եւ Ռիմա Սաղրեան, Հ.Ա.Ը.Ա.Ի վաստակաշատ վեթերան անդամներ՝ եղբայրներ Ժիրայր Սարգիսեան, Աբօ Սաղորճեան ու շրջանին մէջ

գործող պատկան մարմիններու ներկայացուցիչներ:

Տօնակատարութիւնը սկսաւ հանդիսավարուհի Ծովիկ Տէրունեանի ողջոյնի խօսքերով, ապա շարունակուեցաւ Հ.Ա.Ը.Ա.Ի արի-արենոյշներու դրօշակի արարողութեամբ եւ ամերիկեան, հայկական ու Հ.Ա.Ը.Ա.Ի քայլերգներու երաժշտութեան կատարումով: Սեղաններու օրհնութիւնը կատարեց Խորէն Ա. Քհնյ. Հապէչեան:

Հ.Ա.Ը.Ա.Ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղին կողմէ բարի գալուստի խօսքերով ելոյթ ունեցաւ վարչութեան ատենապետ Վահան Տէրունեան: Ան ուրախութեամբ յայտարարեց, թէ 1970ին հիմնուած Հ.Ա.Ը.Ա.Ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ, այսօր ունի 324 անդամներ, 267ը՝ մարզիկներ՝ 11 պատգեթպոյի եւ 3 ֆոթպոյի խումբերու մէջ, նաեւ՝ 75 սկաուտներ եւ արծուիկներ: Ապա ան շարունակեց ըսելով. «Վերջին 40 տարուան ընթացքին մեզմէ շատեր իրենց անոյշ ու հետաքրքրական յուշերը ունին այս կազմակերպութեան մէջ, իբրեւ մարզիկ, իբրեւ արի-արենոյշներ կամ պարզ անդամներ, որոնք իրենց յիշատակելի պատմութիւնը ունին բաժնելու ձեզի հետ: Այսօր հպարտանքով կը տօ-

նենք մեր մասնաճիւղին հիմնադրութեան 40ամեակը, Հ.Ա.Ը.Ա.Ի Սան Ֆրանսիսքոյի ու Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Ռոստոմ» Ուխտին հետ»:

Եղբ. Տէրունեան իր խօսքին աւարտին մասնաւոր շնորհակալութիւններ յայտնեց Հ.Ա.Ը.Ա.Ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններուն, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Ռոստոմ» Ուխտին, Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան եւ բոլոր ներկաներուն, որոնք նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կանգնեցան ձեռնարկին:

Տօնակատարութեան ընթացքին տեղի ունեցաւ Հ.Ա.Ը.Ա.Ի քառասնամեակի մոմավառութեան արարողութիւնն ու կարկանդակի հատումը՝ սրահէն ներս ստեղծելով ընդհանուր խանդավառութիւն:

Խորհրդաւոր եւ յուզիչ պահ մը եղաւ 16 պատանիներու մուտքը Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Ռոստոմ» Ուխտի շարքերէն ներս: Արդարեւ, այդ երեկոյեան 16 պատանիներ իրենց երգման ուխտը կատարեցին՝ կնքահայրութեամբ Հ.Յ.Դ.Ի երկարամեայ ու վաստակաշատ նախկին խորհրդատու-վարիչ Մուշեղ Անտոնեանի: Երգման արա-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան «Ծառայութեան» շքանշանով կը պարգևատրուէ Աբելլա եղբ. Յակոբ Կարապետեանը:



րողութեանն էտք, շնորհաւորական խօսքերով ելոյթ ունեցան Հ.Յ.Դ.ի «Ռոստոմ» Ուխտի անդամներէն Սալբի Սիւահեան եւ Հ.Յ.Դ.ի Կեդրոնական Վարչութեանն Արեգ Սանդիկեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Բաֆֆի Խաչատուրեան: Ան նախ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի վարչութիւնը 40ամեակի տօնակատարութեան համար, ապա շնորհաւորեց նաեւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան պատանիները, որոնք այս հանդիսաւոր առիթով տուին իրենց երգումը ու դարձան ընկեր-ընկերուհիներ: Եղբ. Խաչատուրեան շարունակելով ըսաւ.

«Ի՞նչ նուէր կրնանք տալ այս 40 տարեկան մասնաճիւղին: Միայն մէկ բան՝ մեր բոլորին բարոյական ու նիւթական օժանդակութիւնը, այն յոյսով, որ մօտիկ ապագային այս շրջանը եւս ունենայ իր սեփական մարզադաշտը: Ամերիկայի այս ափերուն մենք կը փորձենք նիւթական ներդրումներ ընել՝ մեր զաւակներուն ապագան ապահովելու համար: Հ.Մ.Ը.Մ.ին տուած ձեր նիւթական ու բարոյական ներդրումը, թէեւ նիւթական շահ չ'ապահովեր, սակայն այս պարագային, շահը ձեր զաւակներուն եւ ձեր թոռներուն տիպար հայ ու տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մեծնալն է՝ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն ներս»:

Քառասնամեակի տօնակատարութեան առիթը օգտագործելով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչու-

թիւնը գաղափարը յղացած էր շքանշանով մը մեծարել Հ.Մ.Ը.Մ.ի շարքերու վաստակաւոր անդամներէն՝ Աբելլա եղբ. Յակոբ Կարապետեանը, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով անոր մատուցած երկար տարիներու ծառայութեան համար: Լիբանանի Շրջանային Վարչութեան խնդրանքին ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Աբելլա եղբ. Կարապետեանին շնորհած էր «Ծառայութեան» շքանշանը, առ ի գնահատանք անոր երկար տարիներու նուիրաբերումին: Շքանշանի տուչութիւնը կատարուեցաւ ձեռամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանին, որ զարդարեց Աբելլային լամբակը: Ապա, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր կարգին գնահատեց Աբելլան՝



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին փոխ ատենապետ եղբ. Ժիրայր Սարգիսեան:

անոր յանձնելով գնահատական յուշատախտակ մը, ձեռամբ եղբայրներ Բաֆֆի Խաչատուրեանի եւ Սթիւ Արթիւնեանի:

Յոբելեար մասնաճիւղին եւ Աբելլա եղբ. Կարապետեանին շնորհաւորական ու գնահատական խօսքերով ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին փոխ ատենապետ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Ժիրայր Սարգիսեանը: Ան նախ իր խօսքերը ուղղելով Հ.Մ.Ը.Մ.ի տեղական վարչութեան՝ շնորհաւորեց քառասնամեակի տօնակատարութիւնը ըսելով. «Անցնող 40 տարիներուն շատեր մաս կազմել էտք գացի՛ն, բայց վստահաբար իրենց հետ տարին նաեւ գեղեցիկ ու անոյշ յիշատակներ: Կ'ուզեմ շնորհաւորել այն բոլոր քոյրերն ու եղբայրները, որոնք իրենց զբաղման ներդրումը ունեցան այս մասնաճիւղին գոյատեւման, յառաջդիմութեան ու զարգացման մէջ»:

Ապա, եղբ. Սարգիսեան իր խօսքը մասնաւորելով սկառուտիզմի եւ Աբելլա Յակոբ Կարապետեանի վաստակին մասին՝ շարունակեց. «Մեր բառապաշարին մէջ կայ երկու բառերէ բաղկացած բարդ բառ մը՝ «նախ-ա-կրթարան»: Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկներու բաժանումը՝ նախակրթարանը, նախաքայլն է սկառուտական շարժումին, ուր մեր Աբելլան իր իւրաքայտուկ ոճով կը յայտնաբերէր ու կը մշակէր իւրաքանչիւր գայլիկի անյայտ կարողութիւնները, իր պարզ ու հաղորդական շունչով կը պատգամէր ըլլալ հաւատարիմ Աստուծոյ, ծառայել



հայրենիքին եւ օգնել տկարին, որոնք ուղեցոյցը եղան իր գայլիկներուն հետագայ անհատական ու հաւաքական կեանքին, եւ վարձատրութիւնը՝ իր երկարամեայ ծառայութիւններուն»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Սարգիսեան իր մեծ գնահատականը տալով Աքելլա եղբ. Յակոբ Կարապետեանի մասին ըսաւ. «Այսպիսի անհատականութեան մը տիպարն է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ իւրաքանչիւր ու արժանի տեղը ունեցած, Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկական շարժումին խորհրդանշանը դարձած ու զոհաբերութեամբ իր արժանի տիտղոսին արժանացած, բոլորիս անգուգական Աքելլան՝ եղբայր Յակոբ Կարապետեանը»:

Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան անունով երոյթ ունեցաւ կոմիտէութեան ներկայացուցիչ Խաչիկ Թագեան: Ան նախ շնորհակտրեց Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի հիմ-




նադրութեան քառասնամեակը եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան նոր երգուեալ անդամները՝ շեշտելով մարզական եւ սկստական գործունէութեան նուիրումով եւ տիպար հայ երիտասարդի կերտման գործընթացով առաջնորդուած այս կազմակերպութիւններուն կարեւորութիւնը:

Թագեան շարունակելով իր պատգամը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Ե.Դ., երիտա-

սարդական գուգահեռ կազմակերպութիւններ են, որոնք այս շրջանին մէջ ունին յաւելեալ պարտականութիւն մը, որն է՝ հայեցի դաստիարակութիւնը: Մեզի նախորդած սերունդը հիմնականին մէջ զբաղեցաւ այս կազմակերպութիւններուն հիմնադրումով՝ անոնց տալով շունչ եւ կեանք: Մեր սերունդը եւ յաջորդող սերունդները պէտք է

յանդգնութիւնը ունենան ձեռնարկելու նոյնանման դժուարին գործերու, ի մտի ունենալով գաղութին ապագայի պէտքերը: Այս գործընթացը հաւանաբար պահանջէ դժուարին որոշումներ եւ քայլեր, սակայն մեր միասնական ուժով եւ հաւաքական կամքով պիտի կարենանք առնել հաստատ քայլեր՝ ամրապնդելով գաղութը եւ կազմակերպութիւնները»:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan 32-38, Hanrabedoutian Street, Yerevan 375010, Armenia Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50 sales@europehotel.am

www.europehotel.am



ԱՐԵՆՈՒՇԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ԵՒ ՀԱՅ ԱՐԵՆՈՒՇԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՀԱՎԴՊԻ ՄԷՋ

Գեորգ Յակոբձեան ՅԱԼԷՊ

2 010 տարին հայ իգական սեռին համար սովորական տարի մը չէ, այլ յատկանշական տարեթիւ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հուշակած «Հայ կնոջ տարուան» ձեռնարկներով, միջազգային արենուշական շարժումի հիմնադրութեան 100ամեակի եւ հայ արենուշական շարժումի ստեղծման 90ամեակի ոգեկոչումներով:

Հայ իգական սեռին առաքելութիւնը վերահաստատող, մեր առօրեային ներսանոր ունեցած դերն ու առաքելութիւնը լուսարձակի տակ առնող բարեպատեհ այս տարուան առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկառուտ. Խորհուրդը անցնող ամիսներուն կազմակերպեցին շարք մը ձեռնարկներ:

ՆՆՁԵՑԵԱԼ ԱՐԵՆՈՅՇՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԵՒ ՀԱՒԱՔ

Անցնող 90 տարիներուն միութեան արենուշական շարքերուն անդամակցած ու այսօր յաւէտ հեռացած ննջեցեալ արենոյշներուն յիշատակը անմոռաց պահելու համար, Կիրակի, 19 Սեպտեմբեր 2010ի առաւօտեան, Հալէպի Ս. Աստ-Լաժաճին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան



պաշտօն, նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկառուտ. Խորհուրդի, Շրջանային խմբապետութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներու, աւելի քան 300 տարագաւոր սկաուտ քոյր-եղբայրներու, վեթերան քոյր-եղբայրներու եւ նախկին խմբապետուհիներու:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, ներկաները ուղղուեցան «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահը, ուր մէկ վայրկեան յոտնկայս յարգելէ ետք ննջեցեալ արենոյշներու յիշատակը, փողահար եղբայր մը հնչեցուց մահերգի նուագը: Ապա,

Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Րաֆֆի Փալանճեան բացման խօսքէ մը ետք հրաւիրեց Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանը, յանուն թեմակալ Առաջնորդին փոխանցելու համար օրուան խորհուրդը: Քահանայ Հայրը իր խօսքին մէջ գնահատեց ծառայութեան զաղափարին վսեմութիւնը եւ աւելի հնազանդ ու աւելի կարգապահ ըլլալու թելադրանքը կատարեց:

Հաւաքը վերջ գտաւ Քահանայ Հօր «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Միջազգային արենուշական շարժումի հիմնադրութեան 100ամեակին եւ հայ արենուշական շարժումի ստեղծման 90ամեակին նուիրուած յոբելեանական հանդիսութիւնը տեղի ունեցաւ 25 Սեպտեմբեր 2010ի երեկոյեան ժամը 8-30ին, Հալէպի «Գ. Եսայեան» սրահին մէջ, ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, Ազգ.





Չախիճ՝ Առաջնորդ Սրբազան Զոր փողկապի տուչութիւն: Աջին՝ Սրբազան Զոր յուշանշանի փոխանցում Զալէպի մասնաճիւղի ատենապետ եղբ. Ջաւէն Բախտիկեանի կողմէ:

իշխանութեան Քաղաքական Ժողովի ներկայացուցիչներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութեան, Ծրջանային Սկառու. Խորհուրդի, Ծրջանային խմբապետութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան անդամներուն, հալէպահայ ազգային-քաղաքական կազմակերպութիւններուն, վարժարաններուն, հոգաբարձութիւններուն եւ խնամակարութիւններուն ներկայացուցիչներուն, վեթերան քոյր-եղբայրներուն, նախկին խմբապետ-խմբապետուհիներուն եւ ծնողներուն:

Յորեկեանկան հանդիսութիւնը ըսկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութեամբ, ապա արաբերէն բացման խօսքով հանդէս եկաւ խմբապետուհի քոյր Նանոր Գարայեան, իսկ հայերէն բացման խօսքով՝ Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Բաֆֆի Փալանճեան:

Այնուհետեւ, ելոյթ ունեցաւ միայն քոյրերէ բաղկացած երգչախումբը: Սկառու. Խորհուրդը այս առիթով կազմած էր արենոյշ եւ արծուիկ քոյրերէ բաղկացած երգչախումբ մը, գեղարուեստական ղեկավարութեամբ՝ հայրենի խմբավար Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի, դաշնակի ընկերակցութեամբ՝ քոյր Յոլինէ Ճապաղճուրեան-Փալանճեանի: Առ այդ, ելոյթ ունեցաւ 80 քոյրերէ կազմուած երգչախումբը, որ յաջորդաբար ներկայացուց արենոյշներու, Հ.Մ.Ը.Մ.ին եւ Դաշնակցութեան նուիրուած երգեր:

Հանդիսութեան Սուրիահայ Օգնութեան Խաչի Ծրջանային Վարչութեան ողջոյնի խօսքը փոխանցեց Բէկի Աւրնեան-Պապօղեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Ժամանակին արծուիկ եղած եմ արտայայտութիւնը յաճախ կը լսենք, իբրեւ դրական չափանիշ որոշ կարողութիւններով ու դաստիարակութեամբ օժտուած աղջիկներու եւ կիներու, որոնք կը գործեն բարեսիրական, կրթական, մշակութային եւ այլ միութիւններէ ներս»:

Գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց ամուսնի (քոյր Շաղիկ Ասատուրեան) եւ ֆիլմով նուագ (քոյր Վաննի Մինասեան):

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան, որ ի միջի այլոց ըսաւ. «Մեծ եղաւ դերը հայ արենուշական շարժումին, մանաւանդ մեր գաղթօճախներուն մէջ, հայ կեանքի կազմակերպման ամէնէն տազնապալի օրերուն: Հայ արենուշական շարժումը 90 տարիներու վրայ երկարող իր գործունէութեամբ մեծ նրպաստ ունեցաւ տիպար հայ կնոջ կերտման մէջ»:

Օրուան բանախօսն էր կրթական մշակ, տարիներու խմբապետուհի քոյր Արփի Աւրնեան-Շահինեան: Բանախօսուհին իր խօսքին սկիզբը անդրադարձաւ սկառուական շարժումին եւ յատկապէս արենուշական շարժումին հիմնադրութեան պատմական հանգրուաններուն:

ներուն: Ան յայտնեց, որ արենոյշներու շարժումը կը կոչուէր «Կիայ»: 1923ին կը կազմուի «Կրլ սկառու»ներու եւ «Կրլ կայա»երու միջազգային ընկերակցութիւնը:

Հայ արենուշական շարժումի հիմնադրութեան մասին խօսելով, քոյրը ըսաւ, որ առաջին հայ սկառուներու խումբը կազմած ըլլալու պատիւը կ'երթայ Սկիւտարի հայ երիտասարդութեան, որուն հետքերով կը քայլ նաեւ հայ իգական սեռը, որ յանդերձութիւնը կ'ունենայ կազմելու իգական սեռին յատուկ սկառուական խումբ մը, 1913ին, Սկիւտարի մէջ:

Սկառուութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ֆիզիքական, բարոյական եւ հոգեկան շքեղ կառոյցին հիմնաքարն է: 1918ին Պոլսոյ մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալները աշխոյժ եւ յանդուգն գործունէութիւն կ'ունենան նորանկախ հայրենիքի մէջ եւ արենուշական շարժումը կը կազմակերպեն Արծուիկ Մելոյեանի խմբապետութեամբ:

Բանախօսուհին շարունակելով իր ելոյթը, ներկայացուց պատմական այն հանգրուանը, երբ արենոյշները կը գործէին Ս.Օ.Խ.ի հովանիին տակ: Ան արխիւային թիւեր, դէպքեր ու տուեալներ ներկայացնելէ ետք ըսաւ, որ համաձայն Ս.Օ.Խ.ի 25րդ Պատգամաւորական Ժողովին հաստատուած Ս.Օ.Խ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի համաձայնագրին, Ս.Օ.Խ.ի արծուիկները կը սկսին գործել Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին ներքեւ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի արենոյշներ: Ապա, քոյր Աւրնեան հետաքրքրական յաջորդականութեամբ ներկայացուց արենոյշներու կազմակերպական կառոյցը, անցնող 90 տարիներու յատկանշական տարեթիւերն ու անոնց ստանձնած առաքելութիւնը:

Հուսկ, եզրակացնելով իր խօսքը, ան ըսաւ. «Շնորհիւ սկառուական կազմակերպութեան, անցնող 90 տարիներուն, սերունդ մը ամբողջ, իբրեւ հայ պատանիներու բանակ, դաստիարակուած եւ



Օրուան բանախօս Արփի Աւրնեան-Շահինեան, Յ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան եւ Ս.Օ.Խաչի Շրջանային Վարչութեան անդամ Բէկի Աւրնեան-Պապօլեան:

սողորուած է Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խ.ի գաղափարականով: Երէկուան արծաթեակները այսօր դարձած են հասուն արծիւներ, որոնք իրենց յարատեւ սլացքով կը ներկայացնեն Սուրիան՝ Հ.Օ.Մ.ի սեմինարներուն, գիտաժողովներուն, Հ.Օ.Մ.ի Պատգամաւորական Ժողովներուն, Սփիւռքի թէ հայրենիքի մէջ»:

Հանդիսութեան աւարտին, Սկառու. Խորհուրդն ու վարչութիւնը յօրհանարական զոյգ առիթներով իրենց պատրաստած յուշանուէրները յանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղէն ներս խմբապետուհի աստիճանին տիրացած քոյրերուն, առ ի երախտագիտութիւն տարիներու իրենց բոլորանուէր ծառայութեան: Այս առիթու բեմ բարձրացան Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղի ատենապետ եղբ. Զաւէն Բախտիկեանն ու Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Բաֆֆի Փալանճեանը: Նոյն առիթով, հայրական իր օրհնութիւն բաշխելու համար բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան:

Յուշանուէր ստացողները բաժնուած էին ժամանակագրական յաջորդականութեամբ չորս խմբակներու, սկսեալ երէց եւ վեթերան խմբապետուհիներէն՝ հասնելով մինչեւ մեր օրերը գործող տարագաւոր խմբապետուհիները, թիւով 54 խմբապետուհի: Յուշանուէրներու կողքին, խմբապետուհիները ստացան նաեւ յօրհանարական հանդիսութեան առթիւ պատրաստուած յատուկ փողկապներ:

Վերոյիշեալ խմբապետուհիներու պատրաստութեան մէջ, անկասկած, կարեւոր դեր ունեցած են մարմինները եւ, հետեւաբար, այս առիթով պէտք էր յիշել նաեւ զանոնք: Առ այդ, իբրեւ երախտագրութիւն, մասնաճիւղին վարչութիւնն ու Սկառու. Խորհուրդը յուշանուէրներ յանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղի խմբապետութեան, Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան: Յուշանուէրները ստանձնեցին մարմիններու ներկայացուցիչները՝ Հայկալի մասնաճիւղի խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան, Ս.Օ.Խաչի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետուհի Արփի Աւրնեան-Շահինեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկերեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Յուշանուէր եւ փողկապ յանձնուեցաւ նաեւ Սրբազան Հօր, որ իր հայրական օրհնութեամբ ու ներկայութեամբ, մնայուն կերպով նեցուկ կը հանդիսանայ սկառուտական բոլոր ձեւի նախաձեռնութիւններու:

Յօրհանարական հանդիսութեան եզրափակիչ խօսքը փոխանեցեց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Ան ողջունել է եղբ. ներկայներն ու կազմակերպուած հանդիսութիւնը, հայ արեւուշական շարժումի եւ Ս.Օ.Խ.ի 90-ամեակները, ըսաւ. «Կը հաւատամ որ իզական այս շարժումները ամէն բանէ առաջ եւ վեր երկու իտէալներու շուրջ գործեցին. առաջին՝ անձնուիրաբար ծառայեցին Աստուծոյ, եկեղեցոյ, ազգին, մարդկութեան ու հայրենիքին: Երկրորդ՝ գործեցին կարգապահ ու գիտակից աշխատասիրութեամբ: Բոլոր անոնք, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի

ցուցիչները՝ Հայկալի մասնաճիւղի խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան, Ս.Օ.Խաչի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետուհի Արփի Աւրնեան-Շահինեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկերեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Յուշանուէր եւ փողկապ յանձնուեցաւ նաեւ Սրբազան Հօր, որ իր հայրական օրհնութեամբ ու ներկայութեամբ, մնայուն կերպով նեցուկ կը հանդիսանայ սկառուտական բոլոր ձեւի նախաձեռնութիւններու:

Յօրհանարական հանդիսութեան եզրափակիչ խօսքը փոխանեցեց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Ան ողջունել է եղբ. ներկայներն ու կազմակերպուած հանդիսութիւնը, հայ արեւուշական շարժումի եւ Ս.Օ.Խ.ի 90-ամեակները, ըսաւ. «Կը հաւատամ որ իզական այս շարժումները ամէն բանէ առաջ եւ վեր երկու իտէալներու շուրջ գործեցին. առաջին՝ անձնուիրաբար ծառայեցին Աստուծոյ, եկեղեցոյ, ազգին, մարդկութեան ու հայրենիքին: Երկրորդ՝ գործեցին կարգապահ ու գիտակից աշխատասիրութեամբ: Բոլոր անոնք, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի



Օրուան հանդիսավարներ:



Ը.Մ.ի մեծ դպրոցէն, արենուշական շարժումէն դուրս եկան, իրենց ներկայութիւնը ամբողջական եւ արդիւնաւէտ եղաւ»:

Առաջնորդ Սրբազանը իր խօսքը շարունակելով նշեց. «Հայ իգական տարրը արենուշական շարժումով ինքնավստահութիւն չահեցաւ: Եթէ մենք ընկերային ու մարդկային կեանքին մէջ կ'ուզենք հական նշանակութիւն ունեցող դերին մէջ մնալ պէտք է համամարդկային ու համաշխարհային մակարդակով աշխատանք տանինք»:

Յոբելեանական հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ-ԽՐԱԽՃԱՆՔ

Յոբելեանական հանդիսութեան յաջորդեց պարահանդէս-խրախճանքը, որ տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Անի» ճաշարահին մէջ, ներկայութեամբ յոբելեանական հանդիսութեան յուշանուէր ստացող կարգ մը խմբապետուհիներու եւ իրենց



պարագաներուն, Հ.Մ.Ը.Մ.ական մարմիններու քոյր-եղբայրներու եւ Հալէպի մասնաճիւղի խմբապետութեան:

Պարահանդէսը սկսաւ բացման խօսքով, ուր նշուեցաւ թէ այս օրը խմբապետուհիները մեծարելու եւ զանոնք վերարժեւորելու լաւագոյն առիթն է:

Բացման խօսքէն ետք, ներկայ խմբապետուհիները միասնաբար հատեցին հայ արենուշական շարժումի հիմնադրութեան 90ամեակին նուիրուած կարկանդակը, որուն յաջորդեց «Անի» նուագախումբին եւ երգիչ Գօգօ Ասէեանի ելոյթը: Նուագախումբը զանազան երգերու կատարողութեամբ յաջողեցաւ սրահին մէջ խանդավառ տրամադրութիւն ստեղծել: Դադարին, անեկզոտներով, պատումներով եւ հանելուկներով ելոյթ ունեցան երէց եղբայրներ: Նոյն միջոցին վաճառուեցան սկառուտ քոյր-եղբայրներու պատրաստած ձեռագլխի աշխատանքները:

Պարահանդէսի աւարտին կարգը հասած էր միութեանական աւանդութիւն դարձած ազգային-յեղափոխական երգերուն: Ներկաները միասնաբար ու ազգային բարձր ոգիով վերակենդանացուցին մեր հերոսները եւ անոնց նուիրուած երգերը:

Պարահանդէս-խրախճանքը վերջ գտաւ առաւօտեան կանուխ ժամերուն:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.

The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



**Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ «ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ»
ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ՄԻԱԽՈՐՆԵՐՈՒ
«ՍՕՍԷ ՄԱՅՐԻԿ» ԲԱՆԱԿՈՒՄԸ...**

**Հալեպի մասնաճիղի
Սկաուտ. Խորհուրդ
ՀԱԼԷՊ**

ՀՄԸՄԻ Հալեպի մասնաճիղի «Շախարշ Քրիսեան» գայլիկ-արծիկ միաւորները իրենց տարեկան բանակումը կատարեցին 15-23 Օգոստոս 2010ին, Քեսապի մէջ, մասնակցութեամբ 138 քոյր-եղբայրներու:

Նկատի առած, որ 2010 տարին Մեծի Տանն Կրիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ հռչակուած էր «Հայ կնոջ տարի», բանակումը անուանուեցաւ «Սօսէ Մայրիկ» բանակում, որովհետեւ Սօսէ Մայրիկ որքան կին էր ու մայր, նոյնքան եւ ակնյիտով ան հայոց նորագոյն պատմութեան եզակի դէմքերէն էր, որ ազգային ինքնութեան եւ հպարտութեան աղբիւր դարձաւ իր մարմնաւորած տիպարով եւ սերունդներուն կտակած պատգամով: Բանակումի խմբակները կը կրէին Հայկական Յեղասպանութեան զոհ գացած մտաւորականներու, միջազգային եւ հայ արեւուշական խումբերու հիմ-

նադիրներուն եւ հերոսուհիներուն անունները- Դանիէլ Վարուժան, Ռուբէն Զարդարեան, Սիւսանիթո, Կոմիտաս, Արծուիկ Մելոյեան, Ռուբինա, Ծաղեր Տ. Մովսէսեան եւ Օլաւ Փառլըր: Արդարեւ, 2010ը կը նշէր Հայկական Յեղասպանութեան 95ամեակը, միջազգային եւ հայ արեւուշական շարժման 100ամեայ եւ 90ամեայ յոբելեանները:

«Շախարշ Քրիսեան» գայլիկ-արծիկ միաւորները խմբապետութեան մշակած ծրագիրը իրագործուեցաւ ամենայն բժախնդրութեամբ:

Առաւօտեան սկաուտական մարզանքները, արդիական միջոցներով ներկայացուած դասախօսութիւնները, նրատակեաց խաղերը, հետախուզական արշաւները, գիշերային գործունէութիւններն ու խրախճանքները, տեսերիզի ցուցադրութիւնները, երգի ուսուցումները, սկաուտական գրոյցները, մինչեւ իսկ նախքան ճաշելը բարձրաձայն աղօթքն ու մէկ սեղանի շուրջ սեղանակիցներ դառնալը, լուսացուիլը, քնանալը, բանակավայր մաքրելն ու պաշտպանելը իրենց «համն ու հոտը» ունէին:

Բանակումին օգտաշատ դասախօսութիւնները կեդրոնացած էին սկաու-

տական, ազգային, առողջապահական, կրօնական, կենցաղային եւ համամարդկային հարցերու շուրջ:

Բանակող քոյրերն ու եղբայրները արշաւներ կատարեցին դէպի Քեսապի տեսարժան վայրերը: Անոնք բարձրացան Մնտրան եւ Դաբասա լեռները, այցելեցին Գարատուրանի ակումբն ու նորակառոյց եկեղեցին, ինչպէս նաեւ՝ Տիւզ Աղաճի հրաշալի անտառները: Անոնք կատարեցին նաեւ նորաձեւ հարց-պատասխանի մրցումներ, որոնց հարցումները կ'ընդգրկէին սկաուտական (գայլիկական), ազգային-յեղափոխական, կրօնական եւ ընդհանուր գիտելիքներ:

Միաւորի խմբապետական կազմը ոչ մէկ ջանք խնայեց բանակողներուն առատ սնունդ եւ լաւ առողջապահութիւն ապահովելու համար՝ թէկուզ երբեմն զոհելով դադարի իր ազատ ժամերը:

Եօթնօրեայ բանակումը անցաւ շատ արագ: Բոլորը անհամբեր կը սպասէին խարուկահանդէսը՝ լաւագոյն ձեւով հրամցելու համար բոլորին պատրաստած ճոխ յայտագիրը:

Խարուկահանդէսին ներկայ էին



Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի վարչութիւնն ու սկաուտ. Խորհուրդը, ինչպէս նաեւ հոծ թիւով ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ:

Խարուկահանդէսը սկիզբ առաւ դժուար արարողութեամբ, ապա ներկաները յոտնկայս ունկնդրեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները: Արաբերէն բացման խօսքը արտասանեց բանակումի պատասխանատու եղբ. Ալեքսան Գուլումեան: Ան իր խօսքին մէջ շնորհակտրեց Սուրիոյ նախագահին ընտրութեան 10ամեակը: Հայերէնով բացման խօսքը ընթացեց բանակումի փոխ պատասխանատու քոյր Ֆլորա Փոստարեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի ազգանուէր դերին՝ հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ, իբրեւ հայակերտման բերդ, ազգապահպանման պարիսպ ու հայ նոր սերունդներու մարդկային ու ազգային դաստիարակութեան կրթարան:

Բացման խօսքին յաջորդեց բովանդակալից բացման պատկերը, որ նուիրւած էր Հայկական Յեղասպանութեան 95ամեակին, միջազգային եւ հայ արեւուշական շարժումներու 90րդ եւ 100րդ յոբելեաններուն եւ Սուրիոյ նախագահին ընտրութեան 10ամեակին:

Ապա, տպաւորիչ գեղարուեստական յայտագիրով հանդէս եկան բանակող քոյրերն ու եղբայրները՝ յաջորդաբար ներկայացնելով «Սօսէ Մայրիկ», «Սիրելի Սուրիա» երգերը եւ «Մարդարապատ» պարը: Անոնք ասմունքեցին Վահագն Դաւթեանի «Հաւատում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ» քերթուածը, որմէ ետք ներկայացուցին չափական եւ դանդաղ մարզանքներ, հայկական պար եւ զաւեշտ:

Հոսկ, ոգեւորիչ փակման պարով բանակող քոյրերն ու եղբայրները ջերմ եւ խանդավառ միջնորոտ մը ստեղծեցին ներկաներուն մօտ:

Խարուկահանդէսը փակուեցաւ «ցըտեսութիւն» երգով:



Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի Մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդ ՅԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի «Շաւարշ Քրիսեան» արի-արեւոյճ միաւորները իրենց տարեկան բանակումը կատարեցին 23-29 Օգոստոս 2010ին, Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի էքիզօլուի բանակավայրին մէջ, մասնակցութեամբ 101 քոյր-եղբայրներու: Բանակումը նուիրուեցաւ արեւուշական շարժումի հիմնադրութեան 100ամեակին եւ Հայկական Յեղասպանութեան 95ամեակին: Բանակումը կոչ-

ուեցաւ արեւուշական շարժումի հիմնադիր, լորտ Պէյտըն Փաուրլի քոյր՝ լէյտի Օլաւ Փաուրլի անունով: Խմբակներու անունները եղան Յեղասպանութեան արհաւիրքը ապրած հայկական գաւառներուն անունները: Բանակումի պատասխանատուն էր խմբապետ եղբ. Յովիկ Հայէշեան, փոխ պատասխանատուն՝ փոխ խմբապետ քոյր Շաղիկ Քէհէեան:

Բանակումին ընթացքին արի-արեւոյճները կատարեցին կիսօրեայ եւ միօրեայ արշաւներ դէպի Դաբասս եւ Մնտրան լեռներ, Գարատուրան եւ Տիւզ Աղաճ: Իւրաքանչիւր օր նուիրուած էր սկաուտութիւնը, բնութիւնը, գիտութիւնը, մարմնային եւ մտային կարողութիւնը, ազգային կեանքը, խաղն ու խանդավառութիւնը խորհրդանշող թեմաներու:

Իւրաքանչիւր թեմայի համապատասխան, բանակող քոյրերն ու եղբայրները լսեցին դասախօսութիւն մը:

Դասախօսութիւններու կողքին, օրուան յայտագիրները ընդգրկեցին հարց-պատասխանի մրցումներ, դաշտային խաղեր, ռալի եւ թուաբանական կամ գիտական նստակեաց խաղեր: Ամէնէն յատկանշականը եղաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի բանակավայր այցելութեան օրը: Արի-արեւոյշները սկստական կանչերով բարի գալուստ մաղթեցին Առաջնորդին եւ ունկնդրեցին Տէրունական աղօթքի անոր բացատրութիւնը: Ապա, բոլորը միասին աղօթեցին Տէրունական աղօթքը: Աւարտին, Սրբազան Հայրը օրհնեց բանակավայրին աղը, ջուրն ու հացը: Ան գնահատեց նաեւ մասնաճիւղին անդամներն ու խմբապետութիւնը՝ անոնց մաղթելով յարատեւութիւն եւ հաւատարմութիւն Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանին:

Հուսկ, ան իր այցելութիւնը փակեց «Պահպանիչ»ով:

Բանակումին փակման խարուկահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 29 Օգոստոս 2010ին: Խարուկահանդէսը բացուած յայտարարուեցաւ Սուրբիոյ եւ Հայաստանի ազգային քայլերգներով: Բացման պատկերը ներկայացուց հայ մտաւորականներու կախողան բարձրանալը Հայկական Յեղասպանութեան շրջանին: Յաջորդեցին գաւազանի, գլանի, ռիթմիկ սկստական մարզանքներ, խմբային ասմունք եւ նուագ՝ կատարողութեամբ եղբայրներ Յակոբ Ուրիշիկեանի, Շահէ



Թերգեանի եւ Երուանդ Ոսկերիչեանի: Քննադատական գաւազան մը ներկայացուց հայ ընտանիքներու թուրքիայէն գնումներ կատարելու յոռի երեւոյթը: Ներկայացուեցան նաեւ սկստական բուրգ մը, Հայկական Յեղասպանութենէ վերականգնման պար եւ հայկական պար: Աւարտին, օրուան պատգամը փոխանցեց Եղիշէ Քհնյ. Սարգիսեան: Ան իր խօսքին մէջ գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ը եւ յիշեց Հ.Մ.Ը.Մ-ի դերը սերունդներու դաստիարակութեան մէջ:

Խարուկահանդէսը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգով:

«ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ» ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ՄԻԱԽՈՐՆԵՐՈՒ «ԱՐԾՈՒԻԿ ՄԵԼՈՅԵԱՆ» ԲԱՆԱԿՈՒՄԸ...



Րաֆֆի Սիւլահեան ՅԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի «Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծիկ միաւորներու քոյրերն ու եղբայրները, թիւով 147 հոգի, տարեկան իրենց բանակումը կատարեցին Քեսապի հայաշունչ եւ հրաշագեղ բնութեան գիրկը,

ուր անմիջականօրէն ապրեցան հողին, ջուրին, ծառին ու բոյսին հետ, ստեղծելով ընկերային ջերմ մթնոլորտ, կոփելով արիութեան եւ ճարտարութեան նկարագրային իրենց գիծերը: Բանակողները ի-



րայատուկ շաբաթ մը անցուցին յոգնեցուցիչ, բայց խանդավառ պահերով: Գայլիկներն ու արծուիկները «Արծուիկ Մերոյեան» բանակումին ընթացքին կատարեցին սկաուտական մարզանքներ, երգերու ուսուցումներ, հետախուզական արշաւներ եւ գիշերային գործունէութիւններ, ինչպէս նաեւ՝ հարց-պատասխանի մրցումներ եւ դաշտային ու նստակեաց խաղեր: Անոնք ստացան գայլիկական, ընդհանուր զարգացման եւ ազգային դասախօսութիւններ:

Այս տարուան բանակումը նուիրուեցաւ Հայկական Յեղասպանութեան 95ամեակին եւ արեւուշական շարժումի հիմնադրութեան 100րդ տարեդարձին: Զոյգ առիթները իրենց յատուկ տեղը ունեցան բանակումի յայտագիրներուն մէջ: Բանակումի ամէնօրեայ թեմաներուն մէջ իրենց տեղը ունեցան նաեւ գայլիկ-արծուիկի խոստումին հինգ կէտերը եւ վոհմակին օրէնքները:

Բանակումի ընթացքին քոյրերն ու եղբայրները արշաւներ կատարեցին դէպի Քեսապի տեսարժան վայրերը: Անոնք բարձրացան Մնտրա եւ Դաբասա լեռները՝ հասնելով մինչեւ գագաթ, այցելեցին Պաղճաղասի վանքը, Գարատուրանի ակումբն ու նորակառոյց եկեղեցին: Բանակող քոյրերն ու եղբայրները միօրեայ գործունէութիւն կատարեցին Քեսապի Ազգ-Միացեալ Վարժարանի շրջափակէն ներս, ուր տեղի ունեցան գայլիկական բնոյթ ունեցող դաշտային խաղեր:

Եօթնօրեայ բանակումին աւարտին, բոլորը անհամբեր կը սպասէին խարուկահանդէսը, ուր անդամները պիտի ներկայացնէին իրենց պատրաստած գեղարուեստական կոկիկ յայտագիրը: Խարուկահանդէսին ներկայ գտնուեցան Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան,

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկաուտ-Խորհուրդը, Հայաստանի Հանրապետութեան Տէր Զօր քաղաքի պատուոյ հիւպատոս Սուրէն Վարդանեան, Ազգային եւ Քաղաքական Ժողովի անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեծ թիւով ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ: Խարուկահանդէսը բացուած յայտարարուեցաւ դրօշակի արարողութեամբ. հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները: Հայերէնով բացման խօսքը ընթացեց բանակումի պատասխանատու խմբապետ եղբ. Բաֆֆի Սիլվահեան: Եղբայրը ամփոփ ձեւով ներկայացուց բանակումին աշխատանքները եւ հետապնդած նպատակը: Ապա, «Գրիգոր Յակոբեան» արծուիկ միաւորի փոխ պատասխանատու քոյր Նարինէ Սարաճեան ներկայացուց արաբերէն բացման խօսքը:

Այս առիթով, բանակումին մասնակից քոյրերն ու եղբայրները ներկայացուցին Հայկական Յեղասպանութեան 95ամեակին նուիրուած բացման տպուորիչ պատկեր մը, որուն աւարտին խումբ մը քոյրեր ու եղբայրներ եռագոյն դրօշակներով, փուչիկներով եւ ժապաւէններով ներկայացուցին հայ ժողովուրդի յաղթանակը: Գեղարուես-

տական յայտագիրով բանակողները ներկայացուցին հայկական պարեր, կատարեցին բուրգի կազմութիւն եւ ներկայացուցին գաւազանով ու գլանով մարզանքներ:

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի ընկալուած Խորհուրդին խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Բաֆֆի Փալանճեան: Ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ը իր նպատակով ու նշանաբանով դարձաւ դաստիարակութեան ու մարդակերտումի այն դպրոցը, որ ինը տասնամեակներ շարունակ սերունդները օժտեց մտային ու ֆիզիքական, ազգային ու բարոյական բարձր արժէքներով»: Խօսքին աւարտին, եղբ. Փալանճեան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները վստահած են Հ.Մ.Ը.Մ-ին եւ անոր ստանձնած առաքելութեան:

Իր կարգին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան օրուան պատգամ փոխանցելով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ը, որ ծնունդ առաւ Յեղասպանութեան յաջորդող օրերուն, մեր հայկական գաղթօճախներուն մէջ դարձաւ ազգային կեանքի ուժ եւ կամք, եռանդ ու աշխուժութիւն ներշնչող ամէնէն էական եւ կարեւոր ազդակը: Ան հայ փոքրիկին ու պատանիին սորվեցուց չարքաշուութիւն, անվախութիւն եւ ծառայութիւն, եւ մինչեւ այսօր հայ ժողովուրդը կը մնայ անվախ, իսկ Հ.Մ.Ը.Մ-ականը՝ յաղթական»:

Աւարտին, Առաջնորդը բարձր գնահատեց բանակումի խմբապետական կազմին տարած աշխատանքը եւ խարուկահանդէսին հայաբոյր յայտագիրը:

Խարուկահանդէսը փակուեցաւ «Յետուութիւն» երգով:





... ԵՒ ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ՄԻԱԽՈՐՆԵՐՈՒ «ՌՈՒԶԱՆՆԱ ԵՍԱՅԵԱՆ» ԲԱՆԱԿՈՒՄԸ

**Հալեպի մասնաճիղի
Սկաուտ. Խորհուրդ
ՀԱԼԷՊ**

ՀՄԸՄ-ի Հալեպի մասնաճիղի «Գրիգոր Յակոբեան» արի-արենոյճ միախորհրդ իրենց տարեկան բանակումը կատարեցին 30 Օգոստոսին 5 Սեպտեմբեր 2010, Քեսապի էքզոլոլիսի բանակավայրին ներս, մասնակցութեամբ 112 արի-արենոյճներու:

Այս տարուան բանակումին անունն էր «Ռուզաննա Եսայեան», տրուած ըլլալով որ 2010 տարին հռչակուած էր «Հայ կնոջ տարի»:

Ռուզաննա Եսայեան մասնակցած է Արցախեան ազատամարտին եւ երկու տարի շարունակ, Հազրութի, Ասկերանի, Լաչինի եւ Ստեփանակերտի կռիւներուն, իբրեւ գթութեան քոյր, բուժօգնութիւն ցոյց տուած է վիրաւորներուն

եւ իր անվախութեամբ ոգեւորած է երիտասարդ ազատամարտիկները:

Բանակումին ընթացքին բանակողները բաժնուած էին վեց խումբի, որոնք կոչուած էին նահատակ ազատամարտիկներու անուններով. Մհեր Ջուլհանեան, Շահէն Մեղրեան, Թաթուլ Կրպեան, Պետո Ղեւոնդեան, Վարդան Բախշեան եւ Բեկոր:

Օրական մարզանքներու կողքին, բանակումին յայտագիրը ընդգրկեց ազգային եւ սկաուտական դասախօսութիւններ՝ հետեւեալ նիւթերով. «Սկաուտը բնութեան ծոցին մէջ», «Արեւուշական շարժումը», «Արցախեան պահանջատիրութիւն»:

Տեղի ունեցան հարցապատասխանի մրցումներ: Բանակողները կատարեցին արշակներ՝ բարձրացան Մատրան եւ Դաբասս լեռները, այցելեցին Գարատուրանի ակումբը, կազդուրման կայան եւ Սկիւրին:

Բանակումին եզրափակիչ խարու-

կահանդէսը տեղի ունեցաւ 5 Սեպտեմբեր 2010ի երեկոյեան: Խարուկահանդէսը սկիզբ առաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով: Բացման խօսքերը արաբերէնով եւ հայերէնով արտասանեցին բանակումի պատասխանատու եղբ. Տաթեւ Պէպէճեան եւ բանակումի փոխ պատասխանատու քոյր Դալար Կիրակոսեան, որոնք իրենց խօսքերուն մէջ նշեցին բանակումին կարեւորութիւնը: Բացման խօսքերուն յաջորդեց բացման պատկեր, ապա՝ գեղարուեստական յայտագիրով բանակողները ներկայացուցին հայկական պարեր, ասմունք՝ Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածէն «Եղբայր եմք մեք», մրցակցութեան պար, ինչպէս նաեւ՝ բուրգ, որմէ ետք փակման տպաւորիչ պատկերով եւ ջերմ ծափողոյցներով խարուկահանդէսը հասաւ իր աւարտին: Քոյրերն ու եղբայրները միասին երգեցին «Յոտեսութիւն» երգը՝ խոստանալով յառաջիկայ տարի դարձեալ տեսնուիլ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐԱԹԵՒԻ ԽՈՒՄԲԸ ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՎ ՆՈՒԱՃԵՑ ՀԱԼԷՊԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿՆԵՐԸ

Րաֆֆի Սիլվահեան ՀԱԼԷՊ

Անցնող Սեպտեմբերին, Հայկաի նահանգի քարաթէի ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներն ու մարզիկուհիները յաջողեցան բարձրորակ ներկայացումներով ախոյեանական բաժակներու եւ մետալներու տիրանալ:

Հայկաի եւ չրջակայ գիւղերու աւելի քան 15 ակումբներու մասնակցութեամբ, մրցումները տեղի ունեցան Հայկաի «Ասատ» մարզադաշտին վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները, ըստ իրենց սովորութեան, անգամ մը եւս գրաւեցին ախոյեանութեան բարձրագոյն դիրքերը եւ արժանացան քարաթէի Սուրբ-Իոյ Ֆետերասիոնի անդամներուն եւ դաշտին մէջ գտնուող մարզասէր ժողովուրդին գնահատանքին:

Քաթայի իմբային մրցումներուն Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացուցին Աւօ Պչաքճեան, Մանօ Քէպպապճեան եւ Վահան Եղիայեան, որոնք աւարտականին պարտութեան մատնեցին Հ.Ե.Ը.Ի խաղացողները եւ տիրացան ախոյեանութեան բաժակին ու մետալներուն:

Քաթայի անհատական մրցումներուն, Աւոն ու Մանոն թոյլ չտուին իրենց մրցակիցներուն, որ... մտածեն հասնիլ առաջնակարգ դիրքեր: անոնք գրաւեցին ախոյեանութեան առաջին երկու դիրքերը: Այս մենամարտներուն Աւօ Պչաքճեան պարտութեան մատնեց Հայկաի բանակի եւ Իթթիհատի ակումբներու ներկայացուցիչները եւ հասաւ աւարտական մրցումին, մրցակից ունենալով Հ.Մ.Ը.Մ.ական Մանօ Քէպպապճեանը, որ իր կարգին աւարտական հասաւ՝ յաղթելով Հ.Ե.Ը.Ի եւ Հայկաի բանուորներու ներկայացուցիչներուն:

Ազատ մարտի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի խաղացողները դարձեալ իրենց որոշիչ խօսքը ունեցան եւ գրաւեցին ախոյեանութեան լաւագոյն դիրքերը: 61 քիկ-ի մրցումներուն, Աւօ Պչաքճեան առանց որեւէ դժուարութեան, ձեռք ձգեց անհատական իր երրորդ մետալը եւ յաջողեցաւ յաղթել Հայկաի բանակի եւ Հ.Ե.Ը.Ի խաղացողներուն: Աւարտականին, ան իրեն մրցակից ունեցաւ Սուրբ-Իոյ անցեալ տարուան ախոյեան Իթթիհատի Սուհամմէտ Ռիտան, որ չկարողացաւ դիմանալ Աւոյի հարուածներուն եւ տեղի տուաւ դիւրութեամբ:

76 քիկ-ի մրցումներուն, էլի Պահատէն, որ ախոյեանու-



թեան գլխաւոր թեկնածուներէն էր, բանակի խաղացողին դէմ իր կատարած մենամարտին չինայեց իր հարուածները: Ան կրնար հանդիպումը աւարտել յաղթական արդիւնքով, սակայն մրցակիցի քիթին արիւնահոսութեան պատճառով, ըստ Ֆետերասիոնի օրէնքներուն, էլին պարտուած հռչակեցաւ եւ գրաւեց պատուաբեր երրորդ դիրքը:

55 քիկ-ի մենամարտներուն, Սաբօ Զիթճեան առաջին մրցումին յաջողեցաւ պարտութեան մատնել Պապի ակումբին մարզիկը եւ հասաւ կիսաւարտական, ուր սուր մրցակցութենէ ետք պարտութիւն մը կրեց Նրպոյի խաղացողէն:

Ախոյեանութեան բաժակներու տէրը միայն տղաքը չեղան: Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները եւս ունեցան իրենց խօսքը եւ յաջողեցան ձեռք ձգել Հայկաի երկրորդ դիրքը: Աղջկանց ազատ մարտի մրցումներուն, Մարիա Մալաքեան աւարտականի հասնելով սուր պայքար մը ունեցաւ համալսարանական խումբի մարզիկուհիին դէմ եւ գրաւեց ախոյեանութեան երկրորդ դիրքը:

Երէցներէն շաբաթ մը առաջ, յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի քարաթէի պատանեկան խումբի խաղացողները իրենց կարգին յաջող արդիւնքներով փակեցին 2010 տարեշրջանի Հայկաի ախոյեանութեան մրցումները: Աղջկանց մրցումներուն, Ալիսա Համուին գրաւեց քաթայի մրցաշարքին առաջնութիւնը: Տղոց մրցումներուն, 1998ի ծնունդ Մկօ Մինասեան յաջորդական յաղթանակներէ ետք հասաւ աւարտական հանգրուան եւ տիրացաւ առաջնութեան մետալին, մինչ 1997ի ծնունդ Ներսէս Գէորգը գրաւեց երրորդ դիրքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԿԵՐՏԻՉ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ՄԱՐԶԻՉ ԵՂԲ. ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ծնած է 1980 թվականին: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.Ի քարաթէի խումբին եւ մաս կազմած է անոր տարիքային բոլոր խումբերուն: Հետագային, ան դարձած է մարզիչ: Ութը տարի է ան կը վարէ Հ.Մ.Ը.Մ.Ի քարաթէի խումբին մարզիչի պաշտօնը: Եղբ. Տիգրան Հալթպի ախոյեանական մրցումներէն ետք ըսաւ. «Շնորհակալութիւն կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ.Ի քարաթէի յանձնախումբին, որ միշտ մօտէն կը հետեւի մեր նախապատրաստական աշխատանքներուն: Այդ աշխատանքներուն արգասիքը հաճախակի մենք այսօր բոլորս կը վայելենք: Շնորհակալութիւն նաեւ խաղացողներուն, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին եւ այս տարի դարձեալ յաղթական արդիւնքներով նուաճում մը եւս արձանագրեցին Հ.Մ.Ը.Մ.Ի-ին»:



Մրցումներուն գծով եղբ. Տիգրան ըսաւ. «Բոլոր խումբերը բարձր մակարդակի խումբեր էին եւ սուր մրցակցութիւն ունեցանք նախկին տարիներու ախոյեան մարզիկներու դէմ: Մեր բոլոր խաղացողները ներկայացան լաւ խաղարկութեամբ, նոյնիսկ անոնք որոնք պարտութեան մատնուեցան, արժանացան ֆետերասիտի ներկայացուցիչներու զնահատանքին»:


ԵՂԲ. ԱԻՑ ՊԶԱՔՃԵԱՆ



Ծնած է 1993ին: 12րդ կարգի աշակերտ է Ազգ. Քառէն Եփփէ ձեմարան: Վերջին չորս տարիներուն ան կարողացած է տիրանալ Հալթպի ախոյեանութեան, մէկ անգամ նաեւ՝ Սուրիոյ ախոյեանութեան: Եղբ. Աւօ կը հաստատէ. «Այսօրուան յաղթանակին պատճառներէն մէկն է մեր կամքը, որովհետեւ մենք մարզադաշտ կ'ուղղուինք յաղթանակելու նպատակով, նկատի ունենալով որ մեր մրցակիցները բոլորն ալ ուժեղ են եւ նախկին տարիներու ախոյեաններ են, բայց մեր կորովը աւելի բարձր է»:

ԵՂԲ. ՄԱՆՕ ՔԷՊԱՊՃԵԱՆ

Ծնած է 1993ին: 12րդ կարգի աշակերտ է Ազգ. Քառէն Եփփէ ձեմարան: Ան կ'ըսէ. «Շատ ուրախ եմ որ այս տարի դարձեալ յաջողեցայ յաղթանակ արձանագրել, որ արգասիքն է մեր լուրջ աշխատանքին ու փորձերուն: Մեր աշխատանքը այսքանով պիտի չաւարտի, որովհետեւ մեր նպատակն է տիրանալ նաեւ Սուրիոյ ախոյեանութեան»:



ԵՂԲ. ՎԱՀԱՆ ԵՂԻԱՅԵԱՆ

Ծնած է 1993ին: 12րդ կարգի աշակերտ է: Ան կը նշէ. «Այս տարի առաջին անգամ ըլլալով կը մասնակցէի Հալթպի ախոյեանական մրցումներուն, եւ ուրախ եմ որ ընկերներուս հետ յաջողեցայ տիրանալ քարաթայի խմբային մրցումներու ախոյեանութեան: Շնորհակալութիւն կը յայտնեմ մեր պատասխանատու կազմին եւ մարզիչին, որոնց աշխատանքներուն արդիւնքն է որ մենք կը վայելենք այսօր»:



ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ԶԻԹՃԵԱՆ



Ծնած է 1994ին: 12րդ կարգի աշակերտ է Ազգ. Քառէն Եփփէ ձեմարան: Եղբ. Սարգիս կ'ըսէ. «Այս իմ առաջին մասնակցութիւնս էր: Ես գրաւեցի ախոյեանութեան չորրորդ դիրքը: Յոյսով եմ որ յառաջիկայ մրցումներուն կ'արձանագրեմ աւելի լաւ արդիւնքներ: Ուժեղ մրցակիցներ ունեցանք, բայց մեր մարզիչին ու պատասխանատուներուն քաջալերանքները լսելով՝ փորձեցինք մեր կարելին ընել նուաճում մը արձանագրելու մեր շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ.Ի-ին համար»:

ԵՂԲ. ԷԼԻ ՊԱՀԱՏԷ

Ծնած է 1993ին: 12րդ կարգի աշակերտ է Նաճարեան վարժարանին մէջ: Իր յաջողութիւններուն մասին խօսելով ան կ'ըսէ. «Վստահ որ մարզիկի մը համար հիմնականը յաղթանակն է: Ես այսօր ուրախ եմ որ յաջողեցայ յաղթանակ մը արձանագրել Հ.Մ.Ը.Մ.Ի-ին համար, եւ յոյսով եմ որ յառաջիկային աւելի լաւ արդիւնքներով մասնակցութիւնս կը բերեմ ո՛չ միայն Հալթպի, այլեւ՝ Սուրիոյ եւ ինչու չէ՞ միջազգային մակարդակի մրցումներուն»:



ՔՈՅՐ ՄԱՐԻԱ ՄԱԼԱՔԵԱՆ

Ծնած է 1994ին: 10րդ կարգի աշակերտ է: Մարիան կը խոստովանի. «Այս տարուան մեր մրցումները իւրայատուկ էին, որովհետեւ մեր բոլոր մրցակիցները նախապատրաստական շրջանին լուրջ փորձեր կատարած էին եւ կրնային լաւ արդիւնքներ արձանագրել: Ազատ մարտի մրցումներուն ես կարողացայ հասնիլ աւարտական հանգրուան, բայց դժբախտաբար պարտութեան մատնուեցայ եւ գրաւեցի երկրորդ դիրքը: Փափաքս է, որ յառաջիկային աւելի լաւ արդիւնքներով տիրանամ Հալթպի, եւ ինչու չէ՞ Սուրիոյ ախոյեանութեան տիտղոսներուն»:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԳՐԴ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Լոռի Պարագեան ԱՐԵՆՔ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Շրջանային ըՄ-կառուտական Խորհուրդին, շաբթուան մը տեւողութեամբ, Նէա Մաքրիի Այրիա Մարինայի յունական արեւունշական Ֆետերասիոնի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի միջ-մասնաճիւղային Յրդ սկաուտական բանակումը, 55 հոգիի մասնակցութեամբ:

Մասնակցողներու կարգին էին մօտ տասը աստիճանաւոր խմբապետներ եւ երէց-պարմանուհիներ:

Նոյն բանակավայրէն ներս կը գործէին յունական սկաուտական երկու տարբեր մասնաճիւղեր, որոնց հետ հայ

նակավայր, նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար, այսինքն՝ բանակավայրի ընդհանուր մաքրութիւն, յարգարում եւ ներքին յարմարութիւններու ստեղծում, բանակավայրի կեդրոնական հրապարակին վրայ դրօշակի կայմի կառուցում եւ համադրական ընդհանուր գործունէութեան դասաւորում ու բաժանում:

Բանակումը կը բաղկանար երկու տարբեր բաժանումներէ: Առաջին՝ գայլիկական-արծուիկական, որ կը համախմբէր 24 հոգի: Այս բաժանումը կ'ընդգրկէր 8-11 տարեկան պատանիներ: Երկրորդ բաժանումին մաս կը կազմէին 14 սկաուտ-արեւոյշներ, 11-15 տարեկան: Երկու բաժանումներն ալ բաղկացած էին Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի եւ Գոքինիոյ անդամներէ: Խմբապետներու կողքին օգտակար մասնակցութիւն բերին քանի մը երէց-պարմանուհիներ, ընդհանուր աշխատանքներու եւ ծրագ-

րումներու իրենց մասնակցութեամբ:

Խումբերու տարիքային տարբերութիւնը պատճառ եղաւ, որ բանակումին ընթացքին գործադրուին դաստիարակչական երկու տարբեր ծրագիրներ: Համեմատաբար փոքրերը զբաղեցան «Կակուղ թաթիկ»ի, «Միասող»ի եւ «Երկասող»ի հայկական եւ սկաուտական գիտելիքներով: Առաւել՝ հետաքրքրական դանազան նիւթերով, ինչպէս աշխարհագրութիւն, արեւ, գոյներ, վարորդական կանոններ, խոհանոցային գիտելիքներ, մարզանք, կենցաղավարական գիտելիքներ, հագուստ-կապուստի ու կոկիկութեան ձեւեր եւ այլն:

Սկաուտներու ծրագիրը կ'ընդգրկէր սկաուտական ընդհանուր գիտելիքներ, մարզանք, ծովարշաւ, որմէ ետք գիշերում ծովեզերքի աւազին վրայ, շինարարական նախաձեռնութիւններ եւ այլն:

Սկաուտները կազմակերպեցին հարցում-պատասխանի գիտելիքներու խաղ մը բանակավայրէն դուրս:

Քանի կը խօսինք սկաուտներու մասին, նշենք, որ անոնք ծանրաբեռնուած էին յաւելեալ պարտաւորութիւններով ու պարտականութիւններով, ինչպէս՝ բանակավայրի մուտքի եւ աշտարակի յարգարում, օրօրոցներու շինութիւն եւ բոլոր բանակողներու ճամպրուկներու

եւ ձեռքի պայուսակներու յատուկ հարթակներու կազմութիւն:

Անշուշտ, որ երկու խումբերուն համար ալ անպակաս էր «կանչ»երու, երգերու եւ ձեռային զանազան աշխատանքներու պատրաստութիւնը:

Բանակումը ունեցաւ իր պատի թերթը, որ նախաձեռնութիւնն էր գայլիկական խմբակի մը: Թերթիկը ամէն օր կը վերանորոգէր իր նիւթերը եւ կ'անդրադառնար բանակումի կեանքին յաջորդական հանգրուաններուն:

Դասախօսութիւնները կատարուեցան երեք անձերու կողմէ, իւրաքանչիւր բաժանմունքի մակարդակին համաձայն:

Առաջին դասախօսութիւնը կատարեց եղբ. Լեւոն Մուշոյեան, հրդեհներու դիմագրաւման եւ հրշէջ սպասարկութեանց մասին:

Երկրորդ դասախօսութիւնը ներկայացուց Յունաստանի նաւային ուժերու դաստիարակ Եորդոս Փասխայտիս, որ սկաուտները առաջնորդեց պատերազմական արուեստի գաղտնիքներու աշխարհը, ընտրած ըլլալով թեքուանտոյի մարզաձեւը:

Երրորդ եւ վերջին դասախօսութիւնը կատարեց ատամնաբոյժ եղբ. Արթին Վարդանեան, որուն նիւթը կ'ընդգրկէր բերանի առողջութեան եւ ատամներու մաքրութեան մասին ուղղութիւններ:

Դասախօսութիւններուն բոլոր հետեւողները չափազանց գոհ մնացին եւ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին սկաուտական կանչերով եւ ծափերով:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Բանակումին նախավերջին օրը, միութիւններու, կրօնական դասի եւ ծնողներու ներկայութեան, տեղի ունեցաւ սպասուած փակման հանդիսութիւնը, որ պատրաստուած էր յատկապէս յառաջացած գայլիկական երկու յանձնախումբերու եւ սկաուտներու կողմէ:

Հանդիսութեան բացումը կատարեց Շրջանային խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ բանակումի աշխատանքներուն եւ կեանքին: Յաջորդեց հանդիսութիւնը, որուն ընթացքին գայլիկ-արծ-



ւիկական վոհմակը ներկայացուց Անթուան Տը Սէնթ Էքսիւփերիի «Փոքրիկ իշխանը եւ իր արկածախնդրութիւնները» թատերախաղը: Գլխաւոր դերերը ըստանձնեցին եղբայրներ Վիգէն Փարթամեան, Սերոբ Մանուկեան եւ քոյրեր Մարիանա Գուլումեան, Անայիս Ճենապեան եւ Անի Մանուկեան: Մնացեալ դերասանները ներկայացան ծպտեալ վիճակի մէջ: Ներկայացման սկիզբը երկու արծուիկներ՝ Ռեկինա Միքայէլեան եւ Աննա Մայիսսեան, ինչպէս նաեւ գայլիկ մը՝ Անդրանիկ Նաճարեան, ամփոփ կերպով հայերէնով եւ յունարէնով կարդացին թատերախաղին նիւթը:

Հանդիսութեան մասնակցեցան բոլոր գայլիկներն ու սկաուտները խմբային երգերով ու կանչերով: Գեղարուեստական բաժինին պուզուքիով իր մասնակցութիւնը բերաւ եղբ. Տիմիթրիս Պողոսեան, որուն երկու երգերով ընկերացան եղբ. Վահրամ Մանուկեան եւ Վիգէն Բարսեղեան:

Քոյր Մարիլիզ Գնունի երգեհոնի վրայ նուազեց «Ձարթիւր լաօ»ն: Իրեն ընկերացան քոյրեր Անժէլ Գնունի եւ Ֆրոնա Մովսէսեան:

Եղբ. Սերթիօ Մանուկեան հայերէնով արտասանեց բնութեան նուիրուած կտոր մը:

Սկաուտական գեղարուեստական

բաժինը կ'ընդգրկէր բանակումի կեանքէն առնուած գուարձալի պատկեր մը: Սկաուտները փոխանցեցին նաեւ մաղթանքներ՝ սկաուտական խարոյկի խորհուրդին մասին, օրուան պատշաճ գրութիւններով:

Եղբ. Վիգէն Մինասեանի կողմէ բանակումի մասին գրուած երգ մը համախումբ երգուեցաւ բանակողներուն կողմէ: Աւարտին, տեղի ունեցան պարգեւատրումներ: Բանակումի լաւագոյն գայլիկական վեցեակը եւ սկաուտական խմբակը ստացան յիշատակի օղակներ:

Յուշանուէրներ ստացան նաեւ բանակումի ամբողջ տեւողութեան ներկայ եղող երէց եղբայրներ Թորոս Գոճաշեան, Գրիգոր Մոսկոֆեան եւ պարմանուհի Մարի Տանկուրեան: Վերջինս կատարեց հանդիսութեան ներկայացումը: Յուշանուէր ստացաւ նաեւ բանակումի մասնակցող Երուսաղէմէն քոյր Սօսէ Գրիգորեան:

Տեղի ունեցաւ 11 գայլիկներու խոստման արարողութիւն, որուն ընթացքին խոստում տուող գայլիկներ եռագոյն փողկապներ ստացան իրենց խմբապետներուն կողմէ: Ապա, 9 գայլիկներ ստացան «Միասող»ի եւ 3 հոգի «Երկասող»ի նշաններ: Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կողմէ ատենապետ եղբ. Յարութիւն



Խաչատուրեան ուղղեց շնորհակալութեան եւ շնորհաւորանքի խօսք:

Ապա, բանակողները շրջանակ մը կազմեցին եւ ձեռք-ձեռքի տուած երգեցին բանակումի հրաժեշտի երգը:

Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:

Յաջորդեց Հիւրասիրութիւն՝ պատրաստուած ըՄկառուտական Խորհուրդներու տիկնանց օժանդակ քոյրերուն կողմէ:

Կ'արժէ նշել, որ քոյրերը շաբթուան մը տեւողութեան, բանակավայրէն ներս ստանձնեցին օրը հինգ անգամ բանակողներու համեղ ճաշերու պատրաստութիւնը, որուն համար բանակողները յայտնեցին իրենց անհուն շնորհակալութիւնը: Մնայուն կերպով ճաշի պատրաստութեամբ զբաղեցան օժանդակ խորհուրդի քոյրերէն Ազնէս Սրապեան, Սոֆիա Միքայէլեան եւ Խրիսթինա Մուկոֆեան: Օժանդակեցին նաեւ քոյրեր Դարար Գուլումճեան, Մարալ Խաչեր-



եան, Վիգի Մենէշեան, Անահիտ Մանկոյեան, Վարդ Թորոսեան, Ռոզիթա Գոճաշեան եւ Երրիա Գուլումճեան: Բանակողները իրենց գոհունակութիւնը յայտնեցին վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Կարօ Յովակիմեանին, որ հոգաց մէկ օրուան ընթրիքը: Նոյնպէս եւ նոյն նպատակով՝ եղբ. Մարգար Սրապեանին:

Հիւրասիրութենէն վերջ, ճաշարանին պատին վրայ ցուցադրուեցաւ բանակումին եօթնօրեայ կեանքը ներկայացնող տեսերիզը (երգով եւ նկարնե-

րով), պատրաստուած՝ բանակավայրին մէջ գտնուող Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ քոյր Մարլէն Տաքէսեանի կողմէ:

Բանակումին ընթացքին բանակավայր այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը եւ Շրջանային Սկառուտական Խորհուրդը, ինչպէս նաեւ՝ Գոքինիոյ մասնաճիւղի վարչութիւնը:

Բանակումին փոխադրութիւնները հոգաց նաւային ուժերու կողմէ տրամադրուած փոխադրակառք մը: Խարուկահանդէսէն ետք, գայլիկները իրենց ծնողներով վերադարձան Աթէնք, իսկ յաջորդ օրն ալ՝ սկառուտներն ու խմբապետները, բանակավայրէն ներս հրաժեշտի խրախճանքէն ետք:

Կ'արժէ նշել, որ բանակումին փակումէն քանի մը օր վերջ, յոյն ծանօթ լրագրող Սեմինա Տիէնիի համացանցի կայքէջին մէջ լոյս տեսաւ Հ.Մ.Ը.Մ.ի բանակումին թղթակցութիւնը, համապատասխան լուսանկարներով:

with the complements of

Restaurant Al-Mayass



**Ձարեհ Տերվիշեան
ԹՈՐՈՆԹՕ**

ՀՄԸԱ-ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչութիւնը այս տարի կը ծրագրէր մասնակցել Սքոթիա դրամատան նախաձեռնած տարեկան մարաթոնին եւ ՀՄԸԱ-ի Քեմպրիճի մասնաճիւղին գործակցութեամբ կը լծուէր աշխատանքի եւ չաբաթական խմբային փորձերու:

«Վազք յիշելու համար» մարաթոնը կը հետապնդէ մէկ նպատակ: Մեզմէ յաւէտ բաժնուած սիրելիները յիշել եւ անոնց յիշատակին վազելով, նուիրահաւաքով օգտակար ըլլալ բարեսիրական հաստատութիւններու: Այս տարուան նուիրահաւաքէն բաժիններ կը յատկացուէին Թորոնթոյի «Հիւանդ փոքրիկներ» հիւանդանոցին, ՀՕՄ-ի ամէնօրեայ վարժարանին եւ Արցախի «Սօսէ» մանկապարտէզին:

Ուրբաթ, 24 Սեպտեմբեր 2010ին, Մարաթոնէն (Յունաստան) Թորոնթօ հասաւ մարաթոնին բոցը եւ Թորոնթոյի քաղաքապետը զայն հասցուց «Exhibition Place»ի «Direct Energy» կեդրոնը, ուր պաշտօնական հանդիսութեամբ մը տեղի ունեցաւ մարաթոն վազքի բացման արարողութիւնը, ներկայութեամբ Մարաթոնի եւ Թորոնթոյի քաղաքապետներուն, բարձրաստիճան քաղաքական անձնաւորութիւններու, մարաթոն վազող նշանաւոր մարզիկներու, ինչպէս նաեւ՝ ՀՄԸԱ-ի «Վազք՝ յիշելու համար» խումբի ներկայացուցիչներուն:

Մարաթոնը տեղի ունեցաւ Կիրակի, 26 Սեպտեմբեր 2010ի առաւօտեան, որ կը զուգարդիպէր մարաթոն վազքի 2500րդ տարեդարձին: Արդարեւ, Ք.Ա. 490 թուականին Ֆէյլտիփիտէս, աթէնքի զինուոր-սուրհանդակ մը, Մարաթոնէն

Աթէնք 40 քմ. կը վազէր՝ աւետելու համար յունական զօրքին յաղթանակը:

ՀՄԸԱ-ի «Վազք՝ յիշելու համար» խումբը զանազան տարիքի իր 308 ՀՄԸԱ-ականներով եւ ՀՄԸԱ-ի բարեկամներով մասնակցեցաւ մարաթոնին, 22 հազար այլ վազողներու կողքին, հանդիսանալով մեծագոյն թիւով մասնակցող խումբը: Նարնջագոյն շապիկներ հագած, մեծ խանդավառութեամբ եւ յատուկ ինքնաշարժներով մասնակիցները Հայ Երիտասարդական Կեդրոնէն մեկնեցան վազքուղի:

Մարաթոնը ունէր 3 խմբաւորում - 42 քմ., 21 քմ. եւ 5 քմ.: ՀՄԸԱ-ի «Վազք՝ յիշելու համար» խումբին կրտսերագոյն մասնակցողը 4 տարեկան Սեւակ Քըրճիկեանն էր, որ կը վազէր ծնողքին հետ, մեծ հօր՝ Վիգէն Աճէմեանի յիշատակին, իսկ երիցագոյն անդամը 74 տարեկան Պետրոս Փիլաւճեանն էր:

ՀՄԸԱ-ի խումբը արձանագրեց հետեւեալ արդիւնքները -

Շիրազ Գարաճեան հանդիսացաւ խումբին լաւագոյն մարաթոն (42 քմ.) վազող մարզիկը: Ան առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր նման վազքի մը եւ կը գտնէր յաջողութիւն:

Փիթըր Յեքուրաս հանդիսացաւ խումբին լաւագոյն (21 քմ.) վազող մարզիկը, իսկ Վահան Մահտեսեան՝ երկրորդ: Աղջիկներու կազմէն, Սեւան Մարտիրոսեան 21 քմ. վազքին հանդիսացաւ խումբին լաւագոյնը, ան կը վազէր իր մօր՝ Ալիթ Մարտիրոսեանի եւ մեծ մօր՝ Փառանձեմ Մարտիրոսեանի յիշատակներուն:

Լէս Մէտ հանդիսացաւ խումբին լաւագոյն 5 քմ. վազող մարզիկը, իսկ երկրորդ եւ երրորդ կը հանդիսացան Հայկ Մանուկեան եւ Ճոն Արթիմեան: Աղջիկներու կազմէն Նիրվա Սաթճեան եղաւ խումբին լաւագոյն վազողը:



Երէջքներու 5 քլմ. վազքին, վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական՝ 74ամեայ եղբ. Պետրոս Փիլաւճեան ոչ միայն բարեկաւեց իր մրցանիչը, այլեւ՝ այս տարի եւս իր տարիքի ընդհանուր դասաւորման մէջ հանդիսացաւ երրորդ: Ան Հայկալի մէջ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ, ապա Ֆուլթոնի մարզիկ, նախքան Թորոնթօ հաստատուելը, ուր շարունակած է մաս կազմել իր շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ին եւ նեցուկ կանգնել անոր: Ան հաստատեց, որ այս արդիւնքը ինք կը պարտի Հ.Մ.Ը.Մ.էն ներս իր ստացած դաստիարակութեան:

Բոլոր մասնակցողներուն մօտ զգալի էր յուզումը: Անոնց շապիկներուն վրայ գրուած էր «Կը յիշենք ձեզ»: Ժամանման գիծ հասնելով, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները տեսան իրենց դիմաց պարզուած Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ. դրօշակները: Անոնք բարձր տրամադրութիւններով վերադարձան Հայ



Երիտասարդական Կեդրոն, յառաջիկայ տարի դարձեալ մասնակցելու խոստումով:

ՄՈՆԹՐԻՆԳԻ Հ.Մ.Ը.Մ. - «ԿԱՄՔ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

2 010 տարեշրջանի Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի սկաուտական կազմերու տարեկան բանակումը տեղի ունեցաւ 27 Յունիսէն 4 Յուլիս 2010, «Awacamend Mino» բանակավայրին մէջ, որ կը գտնուի Քեպէք նահանգի Կաթինօ քաղաքին հիւսիս-արեւելքը:

Այս տարուան բանակումը, անցեալ տարուան նման, տեղի ունեցաւ լման կազմով, ջրշուններէն (Beaver՝ յարգի մորթով երկակենցաղ կենդանի մը) մինչեւ երէջքներ:

Բանակումին մասնակցեցան 172 քոյրեր եւ եղբայրներ: Յունիս 21ի առաւօտեան, բանակող քոյրերն ու եղբայրները հաւաքուեցան Մոնթրէալի Հայ Կեդրոնին շրջափակը եւ հոն կէ փոխադրակառքերով մեկնեցան բանակավայր:

Բանակումը սկսաւ 130 հոգիով, ապա յաջորդող օրերուն խումբին միացան այն եղբայրներն ու քոյրերը, որոնք Ս. Յակոբ դպրոցի աւարտական դասարաններու աշակերտներ էին: Իսկ աւելի ուշ՝ ջրշունները: Երկու պարագային ալ յատուկ կարգադրութիւններ եղան երթեւեկի սպասարկութիւնը ապահովելու համար:

Բանակումին ամբողջ տեւողութեան ներկայ էին մասնաճիւղի վարչութեանէն եւ Սկաուտ. Խորհուրդէն, ինչպէս նաեւ անցեալի խմբապետներէն եղբայրներ եւ քոյրեր, որոնք օժանդակեցին խոհանոցային աշխատանքներուն:

Յուլիս 1ը ծնողներու այցելութեան օրն էր: Աւելի քան 150

ծնողներ եւ հարազատներ այցելեցին բանակավայր: Այս տարի եւս փոխադրակառքի յատուկ կարգադրութիւն եղած էր այն ծնողներուն համար, որոնք կը փափաքէին բանակավայր այցելել:

Ծնողներու ժամանումէն ետք, բացատրութիւն տրուեցաւ բանակավայրի օրէնքներուն մասին, ապա զեկոյց տրուեցաւ բանակավայրի եւ բանակումի աշխատանքներուն մասին: Աւելի ուշ, խումբերու ընթրիքէն ետք, որուն մասնակից եղան նաեւ ծնողները, հասաւ սպասուած պահը՝ խարուկահանդէսը: Հաճելի եւ ուրախ մթնոլորտի մէջ տեղի ունեցան սկաուտական կանչեր ու երգեր:

Բանակավայրը օժտուած էր մարզական այլ խաղերու կարելիութիւններով, որոնք լաւապէս օգտագործուեցան բանակողներուն կողմէ, նշենք լողը, մագլցումը, նիզակ արձակումը, kayak-ը, Canoe-ն, obstacle course eu abraska-ն եւ այլն:

Բանակումին ամբողջ տեւողութեան ներկայ եղան եղբայրներ Արթօ Պասաճեան, Արմէն Հացագործեան, Լեւոն Արապեան, Ալյէր Արքիլեան, Բաֆֆի Ծառուկեան եւ Զակէն Արթիսեան, ինչպէս նաեւ վարչական եւ Սկաուտական Խորհուրդի կարգ մը քոյրեր եւ եղբայրներ:

Բանակումը վերջ գտաւ Յուլիս 4ին: Բոլոր մասնակցողները Մոնթրէալ վերադարձան կէսօրէ ետք, խոստանալով յառաջիկայ տարի դարձեալ հանդիպիլ իրարու:

ՈՒՐԱԽԱԼԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԱՐՔ



Ձարեհ Տերվիշեան ԹՈՐՈՆԹՕ

Ամէն տարի Լէյք Փլասիտի մէջ, Նիւ Եորք, տեղի կ'ունենայ «Երկաթեայ մարդ»-ու (Ironman) ընտրութեան մրցումը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն հազարաւոր մարզիկներ:

Մրցումը կ'ընդգրկէ առաջին հանգրուանին 3.8 քլմ. լողալ, ապա 180 քլմ. հեծանիւ քշել եւ վերջաւորութեան՝ 42 քլմ. մարաթոն վազք: Մրցում մը, որ կը պահանջէ ֆիզիքական ուժ, կարողութիւն եւ լուրջ պատրաստութիւն: Ճիշդ ասոր համար մրցումը կը կոչուի «Երկաթեայ մարդ» (Ironman):

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի մարզիկներէն եւ մարզական խորհուրդի անդամներէն եղբ. Արմէն Ճամճիկեան իր մասնակցութիւնը բերաւ այս մրցումին եւ յաջողութեամբ հասաւ ժամանման գիծ: Եղբ. Արմէնի մասնակցութիւնը, սակայն, ունի իր պատմութիւնը:

18 Մարտ 2008ին, եղբ. Արմէնին մօրեղբայրը՝ Մկօ Ստամպուլեան կը մահանայ «կրկնակի պնդերակութեան» (multiple sclerosis) հիւանդութեան պատճառով: Եղբ. Արմէն խորապէս ազդուած իր մօրեղբօր առյաւէտ բաժանումէն, կ'որոշէ իր յիշատակին «Երկաթեայ մարդ» մրցումին մասնակցիլ եւ այդ առթիւ կատարել նուիրահաւաք՝ «կրկնակի պնդերակութեան» գիտական հետազոտութեան կեդրոնին համար:

Խառնուածքով արկածախնդիր եղբ. Արմէն նախապէս մասնակցած է մարաթոնի եւ լեռնային հեծելարշաւի մրցումներու, բայց եւ այնպէս միշտ ի մտի ունեցած է «Երկաթեայ մարդ» մրցու-

մին բերել իր մասնակցութիւնը: Լէյք Փլասիտի «Երկաթեայ մարդ» մրցումին արձանագրուելով, շատ մեծ կ'ըլլայ իր ուրախութիւնն ու խանդավառութիւնը, երբ կ'ընդունուի իր դիմումը: Ամբողջ տարի մը ան մեծ զոհաբերութեամբ կը պատրաստուի մրցումին, առաջին հերթին որպէսզի կարենայ աւարտել զայն եւ ապա՝ հասնիլ ժամանման գիծ, մրցումին որոշուած առաւելագոյն ժամէն առաջ:

25 Յուլիս 2010ին տեղի կ'ունենայ մրցումը եւ եղբ. Արմէն Ճամճիկեան հպարտօրէն, Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը կ'ուրճօքին, կը մասնակցի մրցումին՝ հասնելով ժամանման գիծ, նախատեսուած առաւելագոյն ժամէն շատ առաջ: Մրցումին իրենց մասնակցութիւնը կը բերեն 2611 մարզիկներ, որոնց մէջ մեծ թիւով արհեստավարժ մարզիկներ: Մրցումը կ'աւարտեն 2475 մարզիկներ միայն:

Այս առթիւ եղբ. Արմէն կը հանգանակէ 6000 տոլար եւ կը յանձնէ զայն «կրկնակի պնդերակութեան» գիտական հետազոտութեան կեդրոնին:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԺԸՏԷՅՏԷԻ, ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԵՒ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

ԺԸՏԷՅՏԷԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ժրտէյտէի մասնաճիւղը տարեկան իր բանակումը կատարեց 23-29 Օգոստոս 2010ին, Այն Սաֆայի մէջ:

Երկար ամիսներու պատրաստութենէ ետք, Կիրակի, 22 Օգոստոսի առաւօտեան կանուխ ժամերուն, մասնաճիւղին երէց-պարմանուհի փաղանգները եւ խմբապետական կազմը ժամանեցին բանակավայր: Բանակումը սկսաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, ապա իւրաքանչիւր խումբ անցաւ իր աշխատանքին: Բանակողներ վրանները կարգով լարեցին, գոյքերը տեղաւորեցին, ապա դասաւորեցին խոհանոցը, իսկ երեկոյեան ժամը ճին բարձրացաւ բանակավայրի մուտքի ձեռնալինը, որ յատուկ էր իր տեսակին մէջ:

Երկուշաբթի առաւօտ բանակավայր ժամանեցին մասնաճիւղին արիւնքն ու արեւոյշները, որոնք անմիջապէս անցան աշխատանքի եւ նոյն օրը կէսօրին բարձրացուցին դրօշակի ձողը, կազմեցին իրենց բանակավայրերը եւ յաջորդ օր բարձրացուցին իրենց խումբերուն մուտքի ձեռնալինները:

Հինգշաբթի առաւօտ բանակողներուն միացան դայիկներն ու արծուիկները՝ երգերով ու կանչերով:

Արշաւներով, մրցումներով եւ խարուկահանդէսներով շարունակուեցաւ բանակումը, որուն եօթը օրերէն իւրաքանչիւրը եղաւ անմոռանալի:

Շաբաթ առաւօտ մոկլիները ժամանեցին բանակավայր: Կէսօրէ ետք ժամանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային

Սկառուտ. Խորհուրդը եւ խմբապետութիւնը, մասնաճիւղին վարչութիւնը եւ ծնողներու հոծ բազմութիւն մը: Սկառուտական տողանցքով բանակավայր մտան մասնաճիւղին երեք միաւորները: Անոնց հետեւեցան բոլոր խումբերը: Արարողութեան ընթացքին իւրաքանչիւր խումբի տրուեցաւ տիտղոս մը, իսկ մասնաճիւղի «Տիպար խումբ» ընտրուեցաւ արիական Ա. խումբը: Սկառուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Խաթակ Գոնճայեան Խորհուրդին կողմէ յուշանուէրներ յանձնեց երեք միաւորներուն:

Աւանդական խարուկահանդէսը սկսաւ երեկոյեան ժամը ճին: Խանդավառութիւնը հասած էր իր գագաթնակէտին: Սկառուտները ներկայացուցին երգերու, կանչերու եւ պարերու հարուստ յայտագիր մը: Բոլորը ուրախ էին եւ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէին: Հանդիսութեան աւարտին խօսք առաւ Անանիա Աբղ. Գոնճանեան, որ իր սրտին խօսքը արտասանեց ըսելով, թէ Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտութեան մէջ տրուած դաստիարակութիւնը չի փոխանցուիր դպրոցներուն մէջ, աւելցնելով, թէ քանի մը օրեր առաջ, երբ այցելեց բանակավայր, իր աչքերով տեսաւ, թէ խմբապետական կազմը ինչպէ՞ս հոգ կը տանէր իւրաքանչիւր անդամի: Այս առիթով ան շնորհակալութեամբ մասնաճիւղին խմբապետական կազմը բանակումին յաջողութեան համար եւ թելադրեց նոյն ձեւով աշխատիլ իբրեւ մէկ ընտանիք: Ապա, ան կոչ ուղղեց ծնողներուն, որպէսզի իրենց զաւակները վստահին Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտական շարքերուն:

Այնուհետեւ, «Պահպանիչ»ով եւ «Յտեսութիւն» երգով փակուեցաւ խարուկահանդէսը:

Խարուկահանդէսէն ետք ձոխ երգերով եւ պարերով սկառուտներուն միացան ծնողները, որոնք պարեցին ու զուարճացան: Այս առիթով Սկառուտական Խորհուրդը ըսկառուտներուն համար պատրաստած էր խորովածի երեկոյ մը:

Կիրակի առաւօտեան դժուար էր բաժնուիլ բանակավայրէն, դժուար էր քանդել բոլոր ձեռնալինները: Բանակողները արցունքներով բաժնուեցան իրարմէ ու բանակավայրէն, որ դարձած էր մէկ շաբթուան իրենց տունը:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 2010ին, Մեթնի Զարուուն շրջանին մէջ: Բանակումին թեման Հայ



Դատը եւ մասնաճիւղին հիմնադրութեան 75ամեակն էին:

Շաբաթ, 28 Օգոստոսին, մասնաճիւղին խմբապետական կազմը իր օգնականներով, երէց-պարմանուհի փաղանգները, ընկերակցութեամբ Սկաուտական Խորհուրդին, ուղղուեցան Զարուուն՝ նախքան խումբերուն ժամանումը պատրաստելու բանակավայրը:

Կիրակի, 29 Օգոստոսին, արի-արենոյ խումբերը միացան իրենց պատասխանատուներուն եւ սկսան գործի՝ ձեռայիններ պատրաստելով, խարոյկի փորձերով միշտ ի մտի ունենալով բանակումին թեման: Բանակումին դրօշակի ձողը կը ներկայացնէր էջմիածինի տաճարը, երէց փաղանգին բանակավայրը՝ Մեծն Տիգրանի ամրոցը, իսկ արծուիկ գոյգ երամներու բանակավայրը կը ներկայացնէր մասնաճիւղին 75 տարիներու ընթացքին կիրարկած մարզական գանազան ճիւղերը:

Հինգշաբթի, 2 Սեպտեմբերին, ժամանեցին գայլիկները եւ արծուիկները, որոնք իրենց վառվռուն երգերով ու կանչերով նոր կեանք եւ խանդավառութիւն բերին բանակավայրին: Վերջապէս, Շաբաթ, 5 Սեպտեմբերին, մոկլի վոճմակը հասաւ բանակավայր՝ միանալու խումբերուն եւ մասնակցելու խարուկահանդէսին:

Ամբողջ շաբթուան ընթացքին խումբերը կիրարկեցին գուտ սկաուտական աշխատանք՝ իրենց ձեռայիններով, յայտագիրներով, չարքաշ խաղերով: Անոնք նաեւ տարբեր խումբերով արշակեցին եւ ծանօթացան շրջապատին:

Եւ վերջապէս հասաւ սպասուած օրը: Շաբաթ, 5 Սեպտեմբերի յետմիջօրէին բանակավայրը խճողուեցաւ այցելուներով, որոնք պաշտելէ ետք բանակավայրին մէջ, գնահատեցին սկաուտներուն աշխատանքները եւ ձեռայինները: Ժամը 6ին տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Արարողութեան ներկայ էին մասնաճիւղին վարչութիւնը, Շրջանային Սկաուտական Խորհուրդը, Շրջանային խմբապետութիւնը, նաեւ՝ մասնաճիւղի ծնողներու եւ համակիրներու հոծ բազմութիւն մը: Դրօշակի արարողութենէն ետք, մասնաճիւղին «Վիզէն Զաքարեան» երէց փաղանգը ստացաւ լաւագոյն խումբի յուշանուէրը, իսկ երէց փաղանգէն եղբ. Հայկ Օհանեան ստացաւ «Տիպար սկաուտ»ի յուշանուէրը: Մասնաճիւղի խմբապետական կազմին անունով մասնաճիւղի խմբապետ եղբ. Անդո Պալապանեան յուշանուէր մը յանձնեց Խորհուրդի ատենապետ եղբ. Արթիւր Զուլամեանին: Քոյրեր Մարիա Զուլաքեան եւ Նորա Պուտազեան իրենց կարգին յուշանուէրներ ստացան բանակումին ամբողջ տեղութեան մատակարարութիւնը եւ խոհանոցը ստանձնած ըլլալուն համար: Քոյր Մարկո Զուլամեան եւս ստացաւ յուշանուէր մը՝ Սկաուտական Խորհուրդին ցուցաբերած օժանդակութեան համար: Ապա խօսք առաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ



եղբ. Հրայր Ֆերմանեան: Եղբայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ մասնաճիւղի 75ամեակին եւ այս առիթով շնորհաւորեց մասնաճիւղին սկաուտները, Սկաուտական Խորհուրդը, ծնողները եւ բարի երթ մաղթեց ապագայ սերունդներուն: Ան լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Լ.Մ.ի ազգային եւ մարզկային մեծ առաքելութիւնը՝ նշելով, որ իւրաքանչիւր Հ.Մ.Լ.Մ.ական պէտք է տէրը ըլլայ իր նախնիներու կտակին, մարզկային եւ ազգային մեծ արժէքներուն, որոնցմով կարելի է երաշխաւորել հայութեան երթը: Խօսքը սկաուտներուն ուղղելով՝ եղբ. Ֆերմանեան ըսաւ, որ իրենք կոչուած են շարունակելու 75 տարիներու երթը: «Պէտք է ըլլաք 75 տարեկան, սակայն տակաւին երիտասարդ այս մասնաճիւղին արժանի ժառանգորդները: Բարձր պահեցէք ձեզի փոխանցուած ջահը, տէ՛ր եղէք ձեր ազգային արժէքներուն, հայկական բարձր ոգիին ու հպարտութեան, որպէսզի դուք ալ այդ բոլորը փոխանցէք յառաջիկայ սերունդներուն», ըսաւ ան:

Երեկոյեան ժամը 8ին սկսաւ խարուկահանդէսը: Սկաուտները իրենց երգերով, պարերով, կանչերով եւ թատերական կարճ ներկայացումներով ճոխ մթնոլորտ մը ստեղծեցին եւ արժանացան ներկաներու գնահատանքին: Խարուկահանդէսը իր աւարտին հասաւ «Յտեսութիւն» երգով: Սկաուտները ձեռք-ձեռքի տուած՝ մեծ յուզումով երգեցին, վերամուտին դարձեալ տեսնուելու յոյսով:

ՊէՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Կիրակի, 12 Սեպտեմբեր 2010ի յետմիջօրէին վերջ գտաւ Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին 2009-2010 տարեշրջանի բանակումը՝ Մթէյնի մէջ:

Բանակումին նպատակն էր վերանորոգել մասնաճիւղային սկաուտական ոգին եւ խրախուսել սկաուտներն ու խմբապետները՝ միաժամանակ զօրացնելով անոնց մէջ միութեանական ոգին:



Ութ օրերու վրայ երկարող բանակումը եղաւ յատկանշական, նաեւ բանակումի բնաբանով՝ «Մարդկային պատմութեան հորովոյթը»:

Բանակումին նախորդած շաբաթներուն մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը կատարեցին կազմակերպչական անհրաժեշտ աշխատանքները: Սկաուտական խմբաւորումները, իրենց կարգին, հերթական հաւաքներով պատրաստեցին բանակումին անհրաժեշտ գոյքերը եւ յայտագիրները:

Կիրակի, 5 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 7ին, երէցներու «Ջարեհեան», պարմանուհիներու «Մեղրի» փաղանգները եւ արիներու Ա. խումբն ու արենոյճներու Բ. խումբը մեկնեցան բանակավայր ու անմիջապէս սկսան պատրաստելու բանակավայրին մուտքն ու դրօշակի կայմը:

«Ջարեհեան» փաղանգը իր խմբային աշխատանքներուն

կողքին ստանձնած էր բանակավայրին յարդարումն ու զայն բնակելի տարածքի մը վերածելու աշխատանքը՝ զայն օժտելով լողարանով, արտաքնոցով եւ անհրաժեշտ այլ բաժանմունքներով:

Աստիճանաւոր գայլիկ-արծուիկները բանակումին միացան Երկուշաբթի, 6 Սեպտեմբերի առաւօտեան, երբ տեղի ունեցաւ բանակումին պաշտօնական բացումը:

Յաջորդող երկու օրերը յատկացուեցան բանակավայրերու յարդարման եւ ձեռային աշխատանքներու պատրաստութեան:

Երէցները պատրաստեցին իրենց բարձր ձեռային-բնակարանը, որուն վրայ գիչերեցին:

Պարմանուհիները շինեցին «անջրպետին մէջ այլ մոլորակի վրայ» բանակավայր մը:

Արիները շինեցին միջնադարեան բերդի մը մուտքը ու խմբակային բանակավայրներ:

Արենոյճները իրենց «լաւազոյն» բանակավայրը վերածած էին քաղաքի մը՝ բարձր շէնքերով, կառատան մուտքով եւ երեկտրական սիւնով:

Արծուիկները ունէին իրենց քարայրը, իսկ գայլիկները՝ ծովահէնի իրենց ձեռային նաւը:

Չորեքշաբթի, 8 Սեպտեմբերին, բանակավայր ժամանեցին կրտսեր գայլիկներն ու արծուիկները, եւ սկսան բոլոր խումբերուն յայտագիրները: Գայլիկներն ու արծուիկները իրենց աշխուժութեամբ նոր կեանք տուին բանակավայրին:

Բանակումին տեղի ունեցան տարբեր տեսակի արշաւներ՝ հետազօտելով մօտակայ գիւղերը: Խումբերը կատարեցին նաեւ մարզական շարժաշ խաղեր, զրոյցներ, դասախօսութիւններ, ձեռայիններ եւ տարբեր տեսակի սկաուտական աշխատանքներ:

8 Սեպտեմբերին, խարուկահանդէսի պատրաստութեան եւ աւանդութիւններուն մասին դասախօսեց եղբ. Բաֆֆի Կէփօլանեան:



Հինգշաբթի երեկոյեան բանակավայր այցելեցին մասնաճիւղին վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը:



10 Սեպտեմբերը յատկացուած էր խաղերուն: Այդ օր տեղի ունեցաւ մասնաճիւղային հանգրուանային մեծ խաղը բանակավայրին մէջ, մասնակցութեամբ բոլորին:

11 Սեպտեմբերին բանակավայր ժամանեցին մասնաճիւղին մոկլիները՝ 3-6 տարեկան, թիւով 17, բանակողներուն թիւը բարձրացնելով 141ի, աննախընթաց թիւ մը մասնաճիւղին վերջին 20 տարիներու պատմութեան մէջ:

Նոյն օրը տեղի ունեցաւ պաշտօնական խարուկահանդէսը: Ժամը 5էն բանակավայր սկսան ժամանել ծնողները եւ հիւրերը: Սկաուտները կը կրէին Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի յատուկ թիւ-չորթներ: Բազմաթիւ ծնողներ, հիւրեր եւ այլ մասնաճիւղերէ սկաուտներ, ինչպէս նաեւ մասնաճիւղին վարչութիւնը, Սկաուտական Խորհուրդը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը ներկայ գտնուեցան փակման արարողութեան եւ մրցանակներուն բաշխման:

Բանակումը վերջ գտաւ դրօշակի պաշտօնական արարողութեամբ:

«Յառաջ նահատակ»ի երգեցողութիւնը, որուն մասնակցեցան ներկաները, թնդացուց բանակավայրը:

Խարուկահանդէսը իր յատուկ նախաձեռնութեամբ եւ ուժով, որ կապուած էր բանակումի բնաբանին, տարբեր էր այլ տարիներու խարուկահանդէսներէն իր մուտքերով, յայտագիրներով, պարերով, բուրգերով, ներկայացումներով եւ տեսերիզներու ու սահիկներու ցուցադրութեամբ, որոնք ներկայացուցին բանակումին 8 օրերը: Խարուկահանդէսը աւարտեցաւ աւանդական «Յտեսութիւն» երգով: Մարդկային շղթան կազմուեցաւ եւ ներկաները խոստացան դարձեալ հանդիպիլ:

Ուրախ մթնոլորտէն եւ երգ ու պարէն ետք, Կիրակի օր սկաուտները հրաժեշտ տուին բանակավայրին եւ վերադարձան Պէյրութ:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ԿՕՇԻԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շաղիկ Գեորգեան
ՊԷՅՐՈՒԹ



ԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՅՆ ԿՕՇԻԿԸ

Աշխարհի հնագոյն կօշիկը անցնող ամառ յայտնաբերուեցաւ Հայաստանի Վայոց Ձորի մարզի քարայրներէն մէկուն մէջ, իրլանտացի հնագետներու կողմէ: Կօշիկը ունի 5500 տարուան պատմութիւն: Մասնագետներու կարծիքով, այս կօշիկը նախահայրն է այն կօշիկին, զոր կը հագնէին Իրլանտայի մէջ դեռ յիսուն տարի առաջ: Կովու կաշիէ պատրաստուած այս կօշիկը հազար տարիով մեծ է եգիպտական բուրգերէն: Ըստ գիտնականներու, կօշիկը կրնայ պատկանած ըլլայ կնոջ կամ տղամարդու: Հաւանական է, որ ան պատրաստուած ըլլայ ըստ ապսպրանքի:

Հին ժամանակներուն մարդիկ կը քալէին բոպիկ, բայց երբ տեսան որ քարերն ու փուշերը իրենց ոտքերը կը վիրաւորեն, սկսան իրենց ոտքերուն կապել կենդանիներու կաշիներ, որոնք սակայն յաճախ կը քակուէին: Անոնք ստիպուեցան զանոնք ձեւաւորել: Այսպէս երեւան եկան առաջին կօշիկները:

Սկզբնական շրջանին, մարդիկ կաշիներ կամ ծառի թարմ ճիւղեր կապեցին իրարու, իրենց ներբաններուն եւ «սանտալ» անունը տուին այս նախնական կօշիկին:

Հին Յունաստանի մէջ, մարդիկ կը հագնէին ոտքին շուրջը, շերտ-շերտ փաթթուող կաշիէ ներբաններ: Յետոյ, կաշիէ պարաններ անցուցին ներբաններուն եւ մինչեւ ծունկ դարձաբաժիկ կապեցին: Այս կօշիկներուն մէջ մատները դուրս կը մնային:

Հռոմէացիները տան մէջ կը հագնէին «սանտալ»ներ, իսկ փողոցը՝ կիսակօշիկներ, այսինքն՝ թէ տակը եւ թէ վրան կաշեպատ կօշիկներ, բայց ոտքի մատները միշտ դուրս կը մնային: Զինուորներն ու ճիւղերը կը հագնէին երկար վրձով կօշիկներ, որոնք կը կոչուէին «Պերօ»:

15րդ դարուն սկիզբը, Լեհաստանի Քրաքով քաղաքին մէջ պատրաստուեցան «Քարաքով» կոչուող կօշիկներ, որոնք տարածուեցան ամբողջ Եւրոպայի մէջ: Այս կօշիկներուն քիթերը սուր եւ երկար էին, այնքան երկար, որ կարելի էր քիթերը ծալելով զանոնք ամրացնել սրունքին վարի մասին կամ գուլպային:

16րդ դարուն շինուեցան քառակուսի քիթով եւ բարձր կռունկով կօշիկներ, կարճահասակ թագաւորի մը փափաքին համաձայն: Յետոյ զարդարեցին այդ կօշիկները փայլուն եւ գունաւոր քարերով. անոնք գործածուեցան պալատականներու եւ ազնւականներու կողմէ:

18րդ դարուն կօշիկները պզտիկ փոփոխութիւններ կրեցին. վրձերը կարճ, ընդհանրապէս՝ սեւ-ձերմակ:

Մեր օրերու կօշիկներուն ձեւերն ու տեսակները թուելը անկարելի է...





ՏԱՐՈՐԻՆԱԿ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշխարհի ամենէն տարօրինակ շինութիւններէն մէկը կը պատկանի գամբիւղներ արտադրող «Longaberger» ընկերութեան: Շէնքը կառուցուած է գամբիւղի նմանողութեամբ, երկու տարուան ընթացքին: Շինարարութեան համար ծախսուած է երեսուն միլիոն ամերիկեան տոլար:



ՀԱՄԱԿԱՐԳԻՉ՝ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Աչքը լոյս փոքրիկներուն: 2012ին կը նախատեսուի շուկայ իջեցնել նոր պատրաստուած համակարգիչներ... երեխաներու համար: Մտայղացումը կը պատկանի «LINUX» ընկերութեան: Այս համակարգիչները նախատեսուած են միմիայն փոքրիկներու համար: Անոնք պիտի վաճառուին 75 ամերիկեան տոլարի:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ



ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐՏՈՅՏԸ

Անտառային արտոյտը (Lullula arborea) արտոյտներու ընտանիքին պատկանող թռչուն է:

Անտառային արտոյտի մարմնին վերին մասը, այտերը, պոչն ու թեւերը դարչնամոխրագոյն են, պոչին ծայրի փետուրները եւ աչքին վերի մասի յօնքանման շերտերը սպիտակ են, մէջքին եւ կուրծքին վրայ կան դարչնագոյն երկայնքին բիծեր: Պոչը համեմատաբար կարճ է: Ան կը կշռէ 20-25 կրամ, իսկ երկարութիւնը 80-101 մմ. է:

Անտառային արտոյտը բոյն շինող եւ գաղթող թռչուն է: Բոյն կը շինէ գետինը: Բոյնը կը պատրաստէ չոր խոտերէ, թուփերու տակ, փոսիկներու մէջ: Կը բազմանայ Ապրիլին մինչեւ Յունիս: Օտտուած է գեղեցիկ ձայնով, կ'երգէ ճախրած ժամանակ, ցերեկ թէ գիշեր:

Անտառային արտոյտը կը սնանի առաւելաբար խոտաբոյսերու սերմերով, հատիկներով եւ միջատներով: Ան տարածուած է Եւրոպայի, Հիւսիսային Իրանի, Ռուսաստանի եւ Հայաստանի մէջ:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ եմ ես:

Չեմ դիմանար

տանձ ու մեղրի,

Հսկայ կենդանի եմ անտառի:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 335ի հանելուկին պատասխանն էր գիրք):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՏՈՒՔՈՒ

6		3		8		5		7
4		5				2		6
	8		6		5		9	
2						6		3
	7		3	4	2		5	
3		9						2
	4		5		9		3	
5		1				4		9
9		8		1		7		5

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

1	2	6	8	3	4	7	5	9
3	7	8	9	5	2	1	4	6
5	9	4	1	6	7	8	2	3
8	6	5	4	1	9	3	7	2
2	3	7	6	8	5	4	9	1
4	1	9	7	2	3	5	6	8
9	8	3	5	4	6	2	1	7
7	5	1	2	9	8	6	3	4
6	4	2	3	7	1	9	8	5

Պատասխանը՝ յաջորդիւ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

ՀՈՐԻՁՈՆԱԿԱՆ

- «Ֆորմիլա-1»ի պրագիլիցի մրցավարորդ:
- Ասկերանի բնակավայրերէն - Լուսաւոր տողանցք:
- Վրաստանի գետերէն - Իգական անուն:
- Շարլոթ Գորտէյի գոհը - Առարկայ - Ձայնանիշ:
- Սուրիական գետ - Ողբ, ջայլ:
- Աղբիւր - Անգոյգ - Ֆրանսական քաղաք:
- Իգական անուն - Սպասէ՛:
- Լիբանանի ծովեզերեայ շրջաններէն - Ձայնարան:
- Հռոմէական դիցուհի - Սրտցաւ:
- Մանելիք - Տառի մը դրացիները:
- Հարաւային Ամերիկայի ոստաններէն:
- Անորոշ դերանուն - Մերկ:
- Արական անուն - 5200:
- Կիլիկեան լեռնաշղթայ - Որսի միս - Այբուբենէն:
- Հորովակերտ մասնիկ - Այբուբենէն - Բանակային:
- Ճիւղ - Միջերկրականեան երկիր - Այբուբենէն:
- Մէկուն դէմ չարիք նիւթել - Զիւլ ծածկոց:
- Տեղեկանալ - Այբուբենէն - Կրկնուած ձայնաւորներ - Արական օտար անուն:
- Յօնքար - Փափաքէր - Արական օտար անուն:
- Դրկից գիրեր - Հայ ազատագրական պայքարի ռազմիրան - Կարմրիլ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

- Արաբական կուսակցութիւն - Փաթաթ (հակ.):
- Աչգողրկ - Հաստատական պատասխան - Կեանքի գրաւ:
- Շին Ֆէյյի նախկին զինուորական թեւը - Մահիճի գլխակողմ:
- Ամբողջ - Նաեւ - Պրագիլիցի ֆութպոլիստ:
- Մ. Նահանգներէն - Որչափ - Մասնիկ:
- Աստիճան - Ածականակերտ մասնիկ - Վճիտ:
- Իգական օտար անուն - Դրամանիշ մը - Ժամանել:
- Արական օտար անուն - Գալարուն - Կաթնեղէնէ պատրաստուած ուտելիք:
- Ծուիլ - Ազնուականներու դասակարգ:
- Թերթի երես - Ռամկօրէն՝ այո՛ - Էականերու նիւթական մասը - Կրկնուած բաղաձայններ:
- Ծեր կին - Հայաստանի ֆութպոլի հաւաքականին գլխաւոր մարզիչը:
- Մովսէս մարգարէի եղբայրը - Աղամանդի բիծ - Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին նախկին խմբապետը:
- Կաթի երես - Արօր մաքրելու գաւազան:
- Ուտելով չկտանալ - Մարտունիի բնակավայրերէն - Փոքր քոյր:
- 1996ի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Հիւսիսային Ամերիկայի լիճերէն - Պարանոց:



ԴԱՄՈՒՆ ԳՎԱԾՇՊՈՂ 981 ԻԿԵ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
1	Մ	Ի	Ո	Ի	Ջ	Ե	Փ	Փ	Է	Ֆ	Ա	Ր	Ի	Ն	Ա
2	Ա	Մ	Պ	Գ	Ջ	Ե	Լ	Ե	Ր	Է	Ի	Ն	Ր		
3	Փ	Ա	Ն	Տ	Ա	Տ	Ա	Ռ	Ա	Տ	Ա	Ս	Տ		
4	Ո	Ի	Ր	Մ	Ա	Տ	Ա	Ն	Տ	Է	Ր	Ա			
5	Ն	Ո	Ա				Ս	Ա	Ն	Ա	Ն	Ա	Լ	Ե	
6	Ջ	Ջ					Ա	Կ	Ա	Ն	Ա	Տ	Խ	Է	
7	Ա	Ն	Տ				Տ	Կ	Տ	Ր	Ի	Մ	Ս		
8	Կ	Ի	Տ				Ա	Ռ	Ն	Օ	Ռ	Ի	Թ	Ա	
9	Ն	Է	Տ	Կ	Ա	Ր	Կ	Ա	Լ	Ո	Տ	Ի			
10	Կ	Ա	Ց	Տ	Ա	Ռ	Պ	Ա	Լ	Ա	Տ				
11	Ա	Վ	Մ	Մ	Մ	Մ	Ս	Ա	Լ	ՈՐ	Ր	Ի			
12	Լ	Ր	Ի	Կ	Ռ	Ա	Հ	Ն	Ն	Ք					
13	Ա	Տ	Ի	Կ	Ա					Ս	Ա				
14	Ա	Մ	Պ	Ր	Ո	Պ				Օ	Ր	Ի	Ն	Ա	Կ
15	Պ	Ե	Ե	Ծ	Ա					Մ	Լ	Ո	Ի	Կ	
16	Ա	Ն	Ք	Թ	Ի	Թ				Տ	Ա				
17	Ս	Հ	Ո	Մ			Ս	Ա	Հ	Ո	Ի	Ն	Ի	Ձ	
18	Տ	Կ	Ա	Ր	Ե	Ա	Մ	Ա	Մ	Ե	Ա	Ն	Ի		
19	Ա	Ր	Մ	Ի	Ն	Է				Ի	Ս	Ա	Հ	Ա	Կ
20	Ն	Է	Մ	Ն	Կ	Ո	Ս	Կ	Ր	Ն	Ն	Գ	Ի		

«ԵՐԿԱԹԵԱՅ ՄԱՐԴ»Ը՛

ԵՂԲ. ԱՐՄԷՆ ՋԱՄՃԻԿԵԱՆ

